

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ**

**ՌԱՋՄԱՎԱՐ ՈՒ ԹՅՈՒՆ**

## Նախարան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի ուղերձը << Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության կապակցությամբ

<< Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը համահունչ է Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարության և Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության հիմնական գերակայություններին:

Մարզի զարգացման ռազմավարությունը կնպաստի << Սյունիքի մարզի համայնքներում առկա հիմնախնդիրների լուծմանը, կապահովի Սյունիքի մարզի զարգացման շարունակականությունը:

<< Սյունիքի զարգացման ռազմավարությունը պետք է ընկալել նաև որպես մարզում ներդրումներ կատարելու առաջարկ՝ ուղղված Սփյուռքի մեր հայրենակիցներին, գործարարներին, հայրենական ու միջազգային կազմակերպություններին, բոլոր շահագրգիռ անձանց:

Մենք ակնկալում ենք, որ ռազմավարության մեջ ընդգրկված խնդիրները շատերի համար հետաքրքրություն կներկայացնեն և բոլոր ներդրողների հետ պատրաստ ենք փոխահավետ համագործակցության՝ հանուն Սյունիքի զարգացման:

Ռազմավարության մշակման աշխատանքների համակարգման գործում զգալի է եղել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ԵՄ փորձագետների դերը:

Մշակման աշխատանքներին իրենց աջակցությունն են ցուցաբերել նաև մարզում գործունեություն ծավալող մի շարք միջազգային և հասարակական կազմակերպություններ, որոնք իրենց ներդրումը կունենան առաջիկա տարիներին մարզի զարգացման գործում:

Ռազմավարության մշակման ընթացքում հաշվի են առնվել բնակչության տարբեր սոցիալական խմբերի, գործարարների, հասարակական և այլ կազմակերպությունների առաջարկություններն ու դիտողությունները:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի անունից մեր երախտագիտությունն ենք հայտնում ծրագրի մշակմանն աջակցած պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման բոլոր մարմիններին, մարզային հանձնաժողովի անդամներին և պաշտոնատար անձանց:

Հայաստանի Հանրապետության  
Սյունիքի մարզպետ

Վ.Հակոբյան

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան .....	3
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ .....	4
Այլուսակների ցանկ .....	5
Գծապատկերների ցանկ .....	5
Հավելվածների ցանկ .....	7
Հապավումներ .....	8
I Ներածություն .....	9
II Ամփոփ նկարագիր .....	10
III Առկա իրավիճակի վերլուծություն .....	11
3.1. Բնական պայմաններ .....	11
3.2. Ժողովրդագրական իրավիճակ .....	12
3.3. Քաղաքային զարգացում .....	14
3.4. Տրանսպորտ, կապ և տեղեկատվություն .....	16
3.5. Հանրային ենթակառուցվածքներ .....	19
3.6. Ներքին արտադրանք և եկամուտներ .....	21
3.7. Զբաղվածություն .....	24
3.8. Ռեգիոնալ տնտեսական կառուցվածք, հիմնական ոլորտներ .....	26
3.9. Կրթություն, մարդկային կապիտալ .....	29
3.10. Սոցիալական ներառում .....	30
3.11. Բնապահպանական խնդիրներ, էներգաարդյունավետություն .....	33
3.12. Մարզային և տեղական կարողությունների զարգացում .....	35
3.13. Այլ խնդիրներ .....	38
IV Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների վերլուծություն .....	39
V Տեսլական, նպատակներ և հիմնական գերակայություններ .....	43
5.1. Ռազմավարական նպատակներ և հիմնական գերակայություններ .....	43
5.2. Ռազմավարական նպատակների և գերակա խնդիրների հիմնավորում .....	45
VI Գերակայություններ .....	47
VII Ռազմավարական ծրագրեր .....	53
VIII Ինստիտուցիոնալ շրջանակ .....	57
IX Մոնիթորինգ և գնահատում .....	59
X Ֆինանսական և այլ աղբյուրներ .....	62
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	63

## **Այուսակների ցանկ**

Այուսակ 1 <<, Սյունիքի, Արարատի, Վայոց Ձորի մարզերի բնակչության բնական աճի ընդհանուր գործակիցը 2013-2015թ., պրոմիլ .....	13
Այուսակ 2 << Սյունիքի մարզի բնակչության 2012թ. և 2015թ. համեմատությունը՝ ըստ տարածաշրջանների և բնակավայրերի, տարեսկզբի դրությամբ: .....	13
Այուսակ 3 <<, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի բնակչության սեռատարիքային կազմի կառուցվածքը տոկոսներով, 2016թ. տարեսկզբի դրությամբ .....	14
Այուսակ 4 <<, << մարզերի, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի բնակչության խտությունը 2015թ. դրությամբ .....	14
Այուսակ 5 Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների մատչելիություն՝ ըստ մարզերի ու բնակչության թվի, 2015թ. ....	18
Այուսակ 6 Մարզում ճանապարհային ցանցի խտությունը .....	19
Այուսակ 7 <<, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալը, անփոփոխ գների դեպքում (2009թ.), 2009-2015թթ.ժամանակահատվածում (<< դրամ): .....	27
Այուսակ 8 <<, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, անփոփոխ գների դեպքում (2009թ.), 2009-2014թթ.ժամանակահատվածում (<< դրամ): .....	27
Այուսակ 9. Ժառայության ծավալը մեկ շնչի հաշվով անփոփոխ գների պայմաններում (2009թ.), 2009-2014թթ. (<< դրամ) .....	28
Այուսակ 10 Մեկ շնչի հաշվով արտահանման ծավալները, 2008 – 2014թթ. (<< դրամ).....	28
Այուսակ 11 Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, մ <sup>2</sup> .....	31
Այուսակ 12. << Սյունիքի մարզպետարանի կառավարման կազմակերպական կառուցվածքը .....	36
Այուսակ 13 Սյունիքի մարզի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն .....	39
Այուսակ 14 Սյունիքի մարզի ռազմավարական նպատակներ և գերակայություններ. ....	43
Այուսակ 15 Սյունիքի մարզի գերակայություններ .....	47
Այուսակ 16 Սյունիքի մարզի ռազմավարական ծրագրերը .....	53
Այուսակ 17 Սյունիքի ՄԶՌ հիմնական ռիսկերը և նվազեցման ուղիները .....	59

## **Գծապատկերների ցանկ**

Գծապատկեր 1 Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի մշտական բնակչության թվաքանակը, 2011-2015թթ. տարեկերցի դրությամբ (հազար) .....	13
Գծապատկեր 2 <<, << մարզերի, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի քաղաքների բնակչության թվի փոփոխությունները 2011 – 2016թթ. ընթացքում (2011 արժեքը =100%) .....	15
Գծապատկեր 3 Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ .....	17
Գծապատկեր 4 Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը.....	17
Գծապատկեր 5 Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների կշիռը <<-ում և կապիտալ նորոգման աստիճանը .....	19

Գծապատկեր 6 <<-ում ըստ մարզերի և Երևան քաղաքի արտադրական կարիքների համար տրամադրված գազի տեսակարար կշռի և արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշռի հարաբերությունը:.....	20
Գծապատկեր 7 <<, Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի կոյուղու համակարգի մաշվածության աստիճանը:.....	21
Գծապատկեր 8 Կազմակերպություններում առաջացած թափոններ 1 քառ. կմ -ի հաշվով՝ համեմատած ազգային միջինի հետ: .....	21
Գծապատկեր 9 Հայաստանի Հանրապետության <ՆԱ-ի տարածքային մասնաբաժինները, 2009թ. և 2014թ. ....	21
Գծապատկեր 10 Մեկ շնչի հաշվով <ՆԱ-ն՝ 2009 և 2014թթ. ....	22
Գծապատկեր 11 Մեկ շնչի հաշվով <ՆԱ-ն, որպես ազգային միջինի %, 2015.....	22
Գծապատկեր 12 Միջին ամսական անվանական աշխատավարձը՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ, 2011 – 2015թ. ....	23
Գծապատկեր 13 Տնային տնտեսությունների դրամական եկամուտները՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ, .....	23
Գծապատկեր 14 <<, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի տնային տնտեսությունների դրամական եկամուտների աղբյուրները .....	23
Գծապատկեր 15 <<-ում, Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերում տնտեսական ակտիվության մակարդակը, ընդհանուր, ըստ սեռի ու ըստ բնակավայրի տեսակի (%), 2015թ.	24
Գծապատկեր 16 <<-ում, Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերում գործազրկության մակարդակը, ընդհանուր, ըստ սեռի ու ըստ բնակավայրի տեսակի (%), 2015թ. ....	25
Գծապատկեր 17 <<-ում, Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերում գործազրկության մակարդակի փոփոխությունը 2015թ.-ին 2011թ. համեմատ (%), 2015թ. ....	25
Գծապատկեր 18 Ոչ ֆորմալ գբաղվածությունը <<-ում (% տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ) 2015թ. ....	25
Գծապատկեր 19 Սյունիքի մարզի տնտեսության կառուցվածքը 2015թ. ....	26
Գծապատկեր 20 Սյունիքի մարզի մարզի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը 2015թ., ընթացիկ գներով .....	27
Գծապատկեր 21 Սյունիքի մարզի գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքը 2015թ., ընթացիկ գներով .....	28
Գծապատկեր 22 << և Սյունիքի մարզի բարձրագույն ուսումնական հաստատություններ հաճախողների թվաքանակը 2011-2015թթ. (2011թ.՝ 100%): .....	30
Գծապատկեր 23 <<, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի տնային տնտեսությունները ըստ բնակավայրի տեսակի: .....	30
Գծապատկեր 24 Սյունիքի մարզում ընտանեկան և սոցիալական նպաստ ստացողների տեսակարար կշիռը ըստ տարածաշրջանների: .....	31
Գծապատկեր 25 <<, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի աղքատության և ծայրահեղ աղքատության փոփոխությունը 2011-2015թթ, 2011թ. 100%: .....	31
Գծապատկեր 26 Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակը 2015թթ, <<-ն 100%: .....	32
Գծապատկեր 27 <<, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի թատրոններ, թանգարաններ, գրադարաններ հաճախումների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով 2011-2015թթ., 2011թ. 100%: .....	32

Գծապատկեր 28 << և Սյունիքի մարզի բարելավման կարիք ունեցող գյուղ. նշանակության հողերը ըստ տեսակի տեսակարար կշիռները: .....	33
Գծապատկեր 29 << և Սյունիքի մարզի բարելավման կարիք ունեցող հողերի տեսակարար կշիռները: .....	33
Գծապատկեր 30 <<, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերում տարվա ընթացքում կազմակերպություններում առաջացած թափոնների քանակը մեկ բնակչի հաշվով 2011- 2015թթ., 2011թ. 100%: .....	33
Գծապատկեր 31 <<, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերում տարվա ընթացքում ջրօգտագործման ծավալները 2011-2015թթ., 2011թ. 100%: .....	34
Գծապատկեր 32 <<, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերում տարվա ընթացքում կեղտաջրերի հեռացման ծավալները 2011-2015թթ., 2011թ. 100%: .....	34
Գծապատկեր 33 <<, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի հեռացված կեղտաջրերը ըստ որակի՝ 2015թ.: .....	34
Գծապատկեր 34 << Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերում մարզպետարանի մեկ աշխատողին ընկնող բնակչության թիվը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ: .....	37
Գծապատկեր 35 << Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերում համայնքապետարանների մեկ աշխատողին ընկնող բնակչության թիվը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ: .....	37
Գծապատկեր 36 << Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերում համայնքապետարանների մեկ աշխատողին ընկնող բնակչության թիվը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ, ըստ քաղաքային և գյուղական համայնքների .....	37
Գծապատկեր 37 << Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերում սահմանամերձ բնակավայրերում ապրող բնակչության տեսակարար կշիռը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ .....	38

## **Հավելվածների ցանկ**

Հավելված 1 Տեղեկատվություն Սյունիքի մարզի ուազմավարության խորհրդատվության վերաբերյալ .....	63
Հավելված 2 << Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի հողային հաշվեկշիռը.....	64
Հավելված 3 << Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի քաղաքների որոշ ցուցանիշներ .....	65
Հավելված 4 Նախադպրոցական հաստատությունների գործունեությունը .....	66
Հավելված 5 Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեությունը 2015-2016 ուս. տարում .....	67
Հավելված 6 Առողջապահական համակարգի ցուցանիշներ .....	68
Հավելված 7 Մթնոլորտային արտանետումները .....	69

## Հապավումներ

<b>ԱՎԾ</b>	Ազգային վիճակագրական ծառայություն
<b>ԵՄ</b>	Եվրոպական Միություն
<b>ԿԶԾ</b>	Կայուն զարգացման ծրագիր
<b>ՀԲ</b>	Համաշխարհային բանկ
<b>ՀՀՀ</b>	Համայնքային զարգացման հիմնադրամ
<b>ՀՀՌ</b>	Հայաստանի զարգացման ռազմավարություն
<b>ՀԿ</b>	Հասարակական կազմակերպություն
<b>ՀՀ դրամ</b>	Հայաստանի Հանրապետության դրամ
<b>ՀՆԱ</b>	Համախառն ներքին արդյունք
<b>ՀՏՀՀ</b>	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
<b>ՄԳ</b>	Մոնիթորինգ և գնահատում
<b>ՏՀ</b>	Տարածքային զարգացում
<b>ՏՀԳԾ</b>	Տարածքային զարգացման գործառնական ծրագիր
<b>ՏՀԳՊ</b>	Տարածքային զարգացման գործողությունների պլան
<b>ՏՀՀ</b>	Տարածքային զարգացման հիմնադրամ / Տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմ
<b>ՏԿՁՆ</b>	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
<b>ՏՀՏ</b>	Տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներ
<b>ՈՒԹԿՀՎ</b>	Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ
<b>ՓՄՁ</b>	Փորը և միջին ձեռնարկություններ
<b>ՔՀԿ</b>	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

## I Ներածություն

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2017-2025 թվականների գարգացման ռազմավարությունը մարզային մակարդակի ռազմավարական փաստաթուղթ է, որը սահմանում է Երևարաժամկետ գարգացման հեռանկարներ ու ուղղություններ՝ հիմնվելով առկա իրավիճակի, մարտահրավերների և հնարավորությունների վրա: Այն բխում է ազգային ռազմավարական ծրագրերի պահանջներից և մասնակցային եղանակով ներգրավում բոլոր շահագործիո կողմերին:

2. Պետք է նշել, որ << Սյունիքի մարզի տարածքային գարգացման ռազմավարության հիմնական նպատակները համընկնում են << կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային գարգացման ռազմավարության և << կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի թիվ 29 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային գարգացման ռազմավարության հիմնական գերակայություններին՝ զբաղվածության ընդլայնում, մարդկային կապիտալի զարգացում, սոցիալական ապահովության համակարգի բարելավում և պետական կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացում:

3. Ապացույցների վրա հիմնված և արդյունքների վրա կենտրոնացող տարածքային գարգացման քաղաքականության մշակման և առաջընթացի անխափան չափման նպատակով՝ անհրաժեշտ է ունենալ մշտադիտարկման ու գնահատման ցուցանիշների հետևողական կազմ:

4. Ամփոփելով վերոգրյալը նշենք, որ այս փաստաթուղթը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2017-2025թթ. տարածքային գարգացման ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն), Սյունիքում տարածքային գարգացման բոլոր ուղղությունները միավորում և հստակ ճանապարհային քարտեզ է ստեղծում տարածքային գարգացման քաղաքականության համար:

## II Ամփոփ նկարագիր

5. Այս տեսլականը, որ տարածքային զարգացման քաղաքականությունը Սյունիքի մարզին տրամադրում է փոխկապակցված շարժադրությունը՝ ներուժերի հիման վրա մրցունակությունը բարձրացնելու և մարզի ներսում սոցիալ-տնտեսական համաչափությունը երաշխավորելու նպատակով, բավարար հենք է ստեղծում հետևյալ ռազմավարական նպատակների իրականացման համար.

- 1) << Սյունիքի մարզը կրարելավի իր մրցունակությունը և տնտեսության դիվերսիֆիկացիան՝ 2025թ.-ին 2015թ. համեմատ միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների թվաքանակը կամ առնվազն 10%-ով, ոչ լեռնահանքային արդյունաբերության և ոչ գյուղատնտեսական ֆորմալ աշխատատեղերում զբաղված մարդկանց թվաքանակը՝ 12%-ով, ակտիվ կազմակերպությունների թվաքանակը՝ 10%-ով, ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների տևողությունը կրճատվի 20%-ով:
- 2) << Սյունիքի մարզը կնվազեցնի ներքին անհամաշափությունը՝ 2025թ.-ին 2015թ. համեմատ 5%-ային կետով նվազեցնելով երկարաժամկետ գործազրկության մակարդակը՝ ուշադրություն դարձնելով կանացի գործազրկությանը, և 5%-ային կետով նվազեցնելով աղքատության մակարդակը՝ ուշադրություն դարձնելով հատուկ զարգացման կարիք ունեցող տարածքներին:
- 3) << Սյունիքի մարզում կրարելավի տարածքային և տեղական զարգացման կառավարման կարողությունները և համակարգերը՝ մինչ 2025թ. բոլոր համայնքները կունենան նոր տեղական զարգացման պլաններ, 2025թ.-ին 2015թ. համեմատ մարզային և տեղական վարչակազմերի աշխատակիցների թիվը կնվազի 15%-ով, մարզային և համայնքային աշխատողների 80%-ը վերապատրաստում կանցնի մարզային/տեղական զարգացմանը, մարզի ամբողջ տարածքը կկառավարվի խոշորացված 8-10 համայնքապետարաններով, 2016թ. 72-ի փոխարեն:


### 6. << Սյունիքի մարզի տարածքային զարգացման գերակայություններն են՝

- 1) ժամանակակից արդյունաբերության և զբոսաշրջության խթանում,
  - 2) գյուղատնտեսության և գյուղական տարածքների արդիականացում և բնապահպանություն,
  - 3) տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացում,
  - 4) ներդրումներ մարդկային կապիտալում և սոցիալական ենթակառուցվածքում,
  - 5) տարածքային և տեղական զարգացման կառավարման կարողությունների ամրապնդում:
7. Նշված նպատակներին զուգահեռ սահմանվում են նաև հորիզոնական նպատակներ, ինչպես օրինակ՝ հավասարությունը և խորականության բացառումը, շրջակա միջավայրի պահպանությունն ու էներգաարդյունավետությունը, տեղեկատվական հասարակության ստեղծումը և մրցակցության պաշտպանությունը:

### III Առկա իրավիճակի վերլուծություն

#### 3.1. Բնական պայմաններ

8. << Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավարևելյան հատվածում:



մետաղների հանքավայրերը, որոնցից շահագործվում են Քաջարանի, Կապանի, Ազարակի, Լիճքի հանքավայրերը: Զգալի են բազալտի, մարմարի, կրի, կավի պաշարները, հիդրոէներգետիկ մեծ ռեսուրսներ, հողեր, հարուստ անտառներ և ալյան մարգագետիններ:

12. Ներկայումս << Սյունիքի մարզում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված է երկրաբանական ուսումնասիրության թույլտվություններ՝ 10 մետաղական և 1 ոչ մետաղական:

13. << Սյունիքի մարզում կան շուրջ 170 մեծ և փոքր գետեր, որոնցից առավել խոշորներն են Որոտանը, Ողջին և Մեղրի գետերը: Մարզի ջրամբարներն են Սպանդարյանի (ջրատարողությունը՝ 257 միլիոն մլն մ<sup>3</sup>), Տոլորսի (96.0 միլիոն մլն մ<sup>3</sup>), Շամբի (13.6 միլիոն մլն մ<sup>3</sup>), Անգեղակողի (3.4 մլն մ<sup>3</sup>) և Գեղի (15 միլիոն մլն մ<sup>3</sup>) ջրամբարները:

14. << Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուրի բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Անդրկովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուռն է (3904 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ, 380 մ): Տարածքի մակերևույթի միջին բարձրությունը կազմում է 2200 մ, որը գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշը 350 մետրով:

15. << Սյունիքի մարզում, ըստ բարձութային գոտիականության, հերթափոխվում են Հանրապետության տարածքին բնորոշ կիմայի գրեթե բոլոր տեսակները՝ չոր

#### Քարտեզ 1. << Սյունիքի մարզ

9. Մարզի տարածքը կազմում է 4506 քառ. կմ, << տարածքի 15.1 %-ը՝ Սահմանի երկարությունը՝ 472 կմ, որից՝ 110 կմ Աղբքաջանի հանրապետության (Նախիջևանի ինքնավար մարզ) հետ արևմուտքում, 42 կմ՝ Իրանի Խալամական Հանրապետության հետ հարավում, 272 կմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ արևելքում և 48 կմ << Վայոց Ձորի մարզի հետ՝ հյուսիսում: << Սյունիքի մարզը ներառում է Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրու շրջանները:

10. << Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի հողային հաշվեկշիռը բերված է հավելված 2-ում:

11. Սյունիքն օգտակար հանածոներով Հանրապետության ամենահարուստ մարզն է: Հանրահայտ են Քաջարանի, Կապանի, Ազարակի, Դաստակերտի, Լիճքի, Սվարանցի մոլիբդենի, աղնձի, ոսկու և հազվագյուտ այլ մետաղների հանքավայրերը, որոնցից շահագործվում են Քաջարանի, Կապանի, Ազարակի, Լիճքի հանքավայրերը: Զգալի են բազալտի, մարմարի, կրի, կավի պաշարները, հիդրոէներգետիկ մեծ ռեսուրսներ, հողեր, հարուստ անտառներ և ալյան մարգագետիններ:

12. Ներկայումս << Սյունիքի մարզում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված է երկրաբանական ուսումնասիրության թույլտվություններ՝ 10 մետաղական և 1 ոչ մետաղական:

13. << Սյունիքի մարզում կան շուրջ 170 մեծ և փոքր գետեր, որոնցից առավել խոշորներն են Որոտանը, Ողջին և Մեղրի գետերը: Մարզի ջրամբարներն են Սպանդարյանի (ջրատարողությունը՝ 257 միլիոն մլն մ<sup>3</sup>), Տոլորսի (96.0 միլիոն մլն մ<sup>3</sup>), Շամբի (13.6 միլիոն մլն մ<sup>3</sup>), Անգեղակողի (3.4 մլն մ<sup>3</sup>) և Գեղի (15 միլիոն մլն մ<sup>3</sup>) ջրամբարները:

14. << Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուրի բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Անդրկովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուռն է (3904 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ, 380 մ): Տարածքի մակերևույթի միջին բարձրությունը կազմում է 2200 մ, որը գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշը 350 մետրով:

15. << Սյունիքի մարզում, ըստ բարձութային գոտիականության, հերթափոխվում են Հանրապետության տարածքին բնորոշ կիմայի գրեթե բոլոր տեսակները՝ չոր

մերձարևադարձային, չափավոր տաք, բարեխառն, ցուրտ լեռնային և ծյունամերձ: Սյունիքում է գտնվում Հանրապետության ամենատաք վայրը՝ Մեղրու ցածրադիր գոտին: Արևափայլքի տարեկան տևողությունը տատանվում է 2120 ժամից (Գորիս) մինչև 2700 ժամի (Մեղրի) սահմաններում: Տարվա ամպամած օրերի միջին թիվը կազմում է 40 օր: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին 0.9 °C-ից (Մեղրի) - 9.8 °C է (Գորայք), հուլիս-օգոստոսին՝ 13.9-25.4°C: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 161 մմ (Մեղրի) մինչև 826 մմ (Սիսիանի լեռնանցք): Տեղումների առավելագույն մասը դիտվում է մայիսին, նվազագույնը՝ օգոստոսին:

16. Բնության հուշարձաններից հայտնի են Գորիսի և Խնձորեսկի «բուրգերն» ու քարայրերը, Շաքիի ջրվեժը (18մ)<sup>1</sup> Փոքր Կովկասի ամենաբարձր ջրվեժը, Որոտանի և Ողջիի կիրճները, «Սատանի կամուրջը», Ծավի՝ աշխարհի ամենամեծ բնական սոսիների ռելիկտային պուրակը (60 հա), Շիկահողի արգելոցը, Մթնաձորի անտառը: Պատմամշակութային հուշարձանների մեջ հայտնիներից են Զորաց քարերի հնագույն աստղադիտարանը, Քաղաքերդի, Հալիձորի, Որոտնաբերդի ամրոցները, Տաթևի, Որոտնա, Բղենու վանքերը, Վահանավանքի և Երիցվանքի վանական համալիրները, Աղիտուի դամբարանային հուշարձանը, Սիսիանի նեղինի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը: Մարզի տարածքում են գտնվում «Շիկահող» պետական արգելոցը, «Արևիք» ազգային պարկը, «Սոսու պուրակ», «Զանգեզուր», «Խուատուփ», «Բողաքար» և «Սև լիճ» պետական արգելավայրերն ու 56 բնության հուշարձանները:

17. << Սյունիքի մարզը, շնորհիվ աշխարհագրական դիրքի, ռելիեֆի կտրտվածության, լանջերի տարբեր դիրքադրության, հայտնի է իր հարուստ լանդշաֆտային և կենսաբանական բազմազանությամբ: Տարածաշրջանում լեռնաանտառային գոտու դաշնագույն և լեռնամարգագետնային հողերի վրա ձևավորվել է անտառային և ալպյան բուսատեսակները: Տարածքի մարգագետնային բուսականությանը բնորոշ են տարախոտա - բոշխային (գորգեր) բուսածածկի տիպերը: Խոտարբոստերից հանդես են գալիս գագեր, փետրախոտեր, շյուղախոտեր, աբեղախոտեր: Անտառային բուսականությանը բնորոշ են բույսերի լայնատերև ձևերը, մասնավորապես՝ հաճարենի, կաղնի, բոխի, հացենի, լորենի, սոսի, հոնական ընկույզենի, արաքսյան կաղնի, հոնական շրջահյուս, թավշային իլենի և այլն: Տարածաշրջանի կենդանական աշխարհը հարուստ է էնդեմիկ անողնաշարավոր տեսակներով, այդ թվում՝ ծղրիդներ, մորեխներ, բգեզներ, երկթևանիներ, փափկամարմիններ, սարդեր:

18. Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են, համապատասխանաբար 61.9 և 23.8%: << Սյունիքի մարզը գտնվում է 0,2-0,4g առավելագույն հորիզոնական արագացման գոտում՝ ըստ << տարածքի սեյսմաշրջանացման քարտեզի (տես՝ [http://www.nssr.gov.am/uxe5\\_2.htm](http://www.nssr.gov.am/uxe5_2.htm)):


19. Սյունիքի վերաբերյալ սոցիալ-տնտեսական բոլոր ցուցանիշները տրված են իրավիճակի վերլուծության համապատասխան ոլորտների վերլուծական հատվածներում:

### 3.2. Ժողովրդագրական իրավիճակ

20. << Սյունիքի մարզը հանդիսանում է Հայաստանի ոչ խիտ բնակեցված մարզերից մեկը (բնակչության խտությունը՝ 31 մարդ/քառ.կմ): << Սյունիքի մարզի մշտական բնակչությունը 2016թ. տարեսկզբի դրությամբ կազմել է 139.4 հազ. մարդ, որից 94 հազարը քաղաքային բնակչությունն է՝ (67.4%), մնացածը 45.4 հազարը՝ (32.6%) գյուղական: Տղամարդիկ կազմում են բնակչության 48.9%-ը, կանայք՝ 51.1%-ը:

21. << Սյունիքի մարզի մշտական բնակչությունը 2011-2015թթ. ժամանակահատվածում նվազել է 1.7 %-ով, 141.8 հազար մարդուց հասել է 139.4 հազար՝ 01.01.2016թ. դրությամբ:

Գծապատկեր 1 Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի մշտական բնակչության թվաքանակը, 2011-2015թթ. տարեվերջի դրությամբ (հազար)



Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2016, էջ 41:

Հղում՝ [http://armstat.am/file/article/demog\\_2016\\_2.pdf](http://armstat.am/file/article/demog_2016_2.pdf)

22. << Սյունիքի մարզում բնական աճի ցուցանիշը զիջում է ինչպես << ցուցանիշը, այնպես էլ << Արարատի և Վայոց Ձորի մարզերի ցուցանիշները:

**Աղյուսակ 1. << Սյունիքի, Արարատի, Վայոց Ձորի մարզերի բնակչության բնական աճի ընդհանուր գործակիցը 2013-2015թթ., պրոմիլ**

	2013	2014	2015
<<	4.8	5.1	4.6
Արարատ	5.7	5.8	5.9
<b>Սյունիք</b>	<b>1.5</b>	<b>17</b>	<b>1.0</b>
Վայոց Ձոր	3.6	2.8	1.0

Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 22:

Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_8.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_8.pdf)

23. Ըստ 2015թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, 2012-2015թթ. <<-ից մեկնած և 2015թ. դրությամբ դեռևս չվերարադարձ 15 և բարձր տարիքի անձանց 2.4%-ը Սյունիքի, 7.2 %-ը՝ Արարատի, 2.7%-ը՝ Վայոց Ձորի մարզերից են (աղյուրը՝ [http://armstat.am/file/article/demog\\_2016\\_7.pdf](http://armstat.am/file/article/demog_2016_7.pdf)): << Սյունիքի մարզում 2015թ-ին 2011թ-ի համեմատ ավելի շատ նվազել է քաղաքային բնակչությունը, քան գյուղականը:

**Աղյուսակ 2. << Սյունիքի մարզի բնակչության 2012թ. և 2015թ. համեմատությունը՝ ըստ տարածաշրջանների և բնակավայրերի, տարեսկզբի դրությամբ:**

	2012* հազար			2016 հազար			2016-ը 2012-ի նկատմամբ %		
	Ընդա մենք	Քաղա քային	Գյուղա կան	Ընդա մենք	Քաղա քային	Գյուղ ական	Ընդա մենք	Քաղա քային	Գյուղ ական
Կապանի տարածաշրջան	58.6	50.4	8.2	57.4	49.7	7.7	98.0	98.6	93.9
Գորիսի տարածաշրջան	41.6	20.6	21.0	40.9	20.3	20.6	98.6	98.5	9.1
Սիսիանի տարածաշրջան	30.2	15.2	15.0	30.1	15.2	14.9	99.7	100.0	99.3
Մեղրու տարածաշրջան	11.4	9.0	2.4	11.0	8.8	2.2	96.5	97.8	91.7
<b>Սյունիքի մարզ</b>	<b>141.8</b>	<b>95.2</b>	<b>46.6</b>	<b>139.4</b>	<b>94.0</b>	<b>45.4</b>	<b>98.3</b>	<b>98.7</b>	<b>97.4</b>

Աղյուրը՝ Ժողովրդագրական տվյալների բազա, <http://armstat.am/am/?nid=420>

\*տվյալները վերահաշվարկված են << 2011թ. մարդահամարի արդյունքներով:

24. Հայաստանի Հանրապետության, Սյունիքի, Վայոց Զորի, Արարատի մարզերի բնակչության սեռատարիքային կազմը 2016թ. տարեսկզբի դրությամբ, տոկոսով արտահայտված, ներկայացված է աղյուսակում:

**Աղյուսակ 3. ՀՀ, Սյունիքի, Վայոց Զորի, Արարատի մարզերի բնակչության սեռատարիքային կազմի կառուցվածքը տոկոսներով, 2016թ. տարեսկզբի դրությամբ**

Տարիք	ՀՀ	Սյունիք	Վայոց Զոր	Արարատ
0-15	20.8	<b>19.5</b>	20.0	21.8
16-62	66.3	<b>66.9</b>	66.9	67.4
63+	12.9	<b>13.6</b>	13.1	10.8
ընդամենը	100.0	<b>100.0</b>	100.0	100.0
կին	52.3	<b>51.1</b>	51.4	51.5
տղամարդ	47.7	<b>48.9</b>	48.6	48.5

Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 258, 309, 318:

Հղում՝ [http://armstat.am/file/article/demog\\_2016\\_2.pdf](http://armstat.am/file/article/demog_2016_2.pdf)

25. Հայաստանի Հանրապետության, ՀՀ մարզերի, Սյունիքի, Վայոց Զորի, Արարատի մարզերի բնակչության խտությունը 2015թ դրությամբ, ներկայացված է աղյուսակում:

**Աղյուսակ 4. ՀՀ, ՀՀ մարզերի, Սյունիքի, Վայոց Զորի, Արարատի մարզերի բնակչության խտությունը 2015թ. դրությամբ**

	Բնակչության խտությունը մեկ քառ.կմ-ի վրա
<b>ՀՀ</b>	101
Մարզեր	65
Արարատ	124
<b>Սյունիք</b>	<b>31</b>
Վայոց Զոր	22

Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 18:

Հղում՝ <http://armstat.am/am/?nid=82&id=1847>

### 3.3. Քաղաքային գարգացում

26. Սյունիքի մարզում 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կա 7 քաղաքային և 95 գյուղական համայնք:

27. **Կապան քաղաքը Սյունիքի մարզկենտրոնն է**, մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ կազմում է 42640 մարդ, տնտեսության առաջատար ճյուղն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռողը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, կարի, ոչ հանքային շինանյութերի, այրումինե և մետաղապլաստե իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և սարքավորանքի արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Երևանից մինչև Իհշ ամենամեծ քաղաքն է:

28. **Քաջարան քաղաքը** (մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ կազմում է 7061 մարդ) ՀՀ գունավոր մետաղուրգիայի կենտրոնն է՝ պղնձի և մոլիբդենի հզոր հումքային քազա հանդիսացող հազվագյուտ հանքավայրի շահագործման հիման վրա: Տնտեսության հիմնական և առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է: Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որում

առանձնանում են սննդամթերքի և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը:

**29. Գորիս քաղաքի** (մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ կազմում է 20342 մարդ) տնտեսության հիմնական ճյուղն արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած են էլեկտրաէներգիայի արտադրությունը, սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների, կարի, այսումինեւ և մետաղապլաստե իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների և էլեկտրասարքավումների արտադրությունները: << ավանդական փառատոնների մայրաքաղաքն է, կարող է դառնալ զբոսաշրջային կենտրոն:

**30. Սիսիան քաղաքի** (մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ կազմում է 14856 մարդ) տնտեսության ծավալում գերակշռողն է լեկտրաէներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև սննդամթերքի և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություններ:


**31. ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ** (մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ կազմում է 4542 մարդ) տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը մշակող արդյունաբերությունն է: Որոշակի տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի և մրգերի պահածոների ու հյութերի արտադրությունը: Կարող է դառնալ մրգերի պահածոների, հյութերի արտադրության կենտրոն իր և հարակից գլուխերի համար:

**32. Ազարակ քաղաքի** (մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ կազմում է 4284 մարդ) տնտեսության առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույնը գունավոր մետաղների արդյունահանումն է: Քաղաքի տնտեսության զարգացումը կապված է պղնձամոլիբդենային արտադրության հետ: Ազարակում են գտնվում Հայաստան-Իրան սահմանալին և մարսալին կետերո:

**33. Դաստակերտ քաղաքը** (մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ կազմում է 300 մարդ), Սյունիքի և << ամենափոքր քաղաքային համայնքն է: ԽՍՀՄ տարիներին տնտեսության առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն էր, ներկայումս աշխատանքներ են տարվում պղնձի և մոլիբդենի հանքերը վերագործարկելու համար:

34. << Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի քաղաքների վերաբերյալ որոշ գույքանիշներ բերված են հավելված 3-ում:

Գծապատճեր 2. ՀՀ, ՀՀ մարզերի, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի քաղաքների բնակչության թվի փոփոխությունները 2011 – 2016թթ. ընթացքում (2011 առժեքը =100%)




Աղբյուրը. ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2016, էջ 44-45

Հղումը՝ [http://armstat.am/file/article/demog\\_2016\\_2.pdf](http://armstat.am/file/article/demog_2016_2.pdf)

### 3.4. Տրանսպորտ, կապ և տեղեկատվություն

35. << Սյունիքի մարզն ամբողջապես կախված է ճանապարհային փոխադրումներից, չկան երկաթուղիներ և գործող օդանավակայաններ:

### Գծապատկեր 3. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի թեոնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ




Աղբյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 53:

Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_13.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_13.pdf)

36. ՀՀ Սյունիքի մարզում նշյալ ցուցանիշը կազմում է ՀՀ ցուցանիշի մոտ 19.5%-ը:

### Գծապատկեր 4 Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը



Աղբյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 53:

Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_13.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_13.pdf)

37. ՀՀ Սյունիքի մարզում նշյալ ցուցանիշը վերջին 5 տարիներին նվազել է շուրջ 26%-ով:

38. Տրանսպորտի տեսանկյունից տարածքների միջև տարբերությունները գնահատելու համար ավելի պատշաճ տեղեկատվություն հնարավոր է ստանալ բնակչության թվին ու բաշխվածությանը համեմատ ճանապարհների հասանելիության գնահատման միջոցով։ Համեմատությունը, որն ընդգրկում է ճանապարհային երթևեկության տևողությունն ու ազդակիր բնակչության քանակը, նախանշում է այն մարզերը, որտեղ ճանապարհների մատչելիության բարելավումն ամենանիրաժեշտն է, դրանց թվում է նաև Սյունիքի մարզը։ Նշվածով հաստատվում է Հյուսիս-Հարավ առանցքով ճանապարհաշինության կարևորությունը։

**Աղյուսակ 5. Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների մատչելիություն՝ ըստ մարզերի ու բնակչության թվի, 2015թ.**

ՀՀ մարզեր	Ներմարզային հասանելիություն, րոպե	Մարզից Երևան հասանելիություն, րոպե	Անհավասարությունը միջև և ներհամայնքային հասանելիության միջև, %
<b>Սյունիք</b>	<b>41</b>	<b>249</b>	<b>607%</b>
Վայոց Ձոր	16	110	688%
Արարատ	20	35	175%

Նշում. Ներհամայնքային ճանապարհների մատչելիությունը հաշվարկվում է ըստ ճանապարհային երթևեկության տևողության դեպի հարևան համայնքներ կամ Երևան և ըստ բնակչության թվի:

Աղյուրը՝ ՀՀ 2016-2025թթ տարածքային զարգացման ռազմավարություն, էջ 18:

Հղում՝ [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf)


39. Մեղրիում և Տաթևում նախատեսվում է ներհամայնքային ուղևորափոխադրումների կազմակերպում համայնքների կողմից արտաքին գրանտային ֆինանսավորման ներգրավմամբ, որի արդյունքների դրական լինելու պարագայում կարելի է փորձը տարածել այլ համայնքների վրա:

40. Մարզում ուղևորա և բեռնափոխադրումները կազմակերպվում են մասնավոր ընկերությունների կողմից: Մարզում թվով 33 երթուղիներից ներկայումս սպասարկում իրականացվում է 11 երթուղիներում, իսկ մնացած 22-ում սպասարկում չի իրականացվում մրցույթներին հայտառուների բացակայության պատճառով:

41. Միջանբան և մարզային ենթակայության ճանապարհների զգայի մասը անցնում է ձմեռային կլիմայական պայմաններ ունեցող լեռնային և բարձր լեռնային գոտիներով, ձմեռը հաճախակի դառնում են դժվարանցանելի, երթևեկության տևողությունը էապես ավելանում է: Հեռանկարում քննարկման առարկա կարող է դառնալ օդանավակայանների շահագործումը և երկաթուղու կառուցումը:

42. **Հեռահաղորդակցություն:** Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ «Արմենթել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ (Վիվալ սելլ/ՄՏՍ ապրանքանիշ) և «ՅՈՒՔՈՄ» (Ucom ապրանքանիշ): Մարզի բնակավայրերը 98%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով/օպտիկամանրաթելային և եթերային-շարժական/: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է: Բջջային օպերատորների ծածկույթի քարտեզը: Մարզում լարային հեռախոսակապ ապահովվում է «Արմենթել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ) և «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն (Ռուսելեկոմ ապրանքանիշ): Լարային հեռախոսակապով ապահովված են մարզի բնակավայրերի 85%-ը:

Vivacell Ucom Beeline



Աղյուրը՝ Բջջային օպերատորների հաշվետվություններ:

43. Մարզի 129 բնակավայրերում գործում է <<Հայփոստ>> ՓԲԸ մասնաճյուղերը, ապահովելով մարզի համայնքների 100% ծածկույթը:

44. «Սյունիքի մարզում եթերային հեռուստահաղորդումներն իրականացվում են <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>> ՓԲԸ Սիսիանի, Գորիսի և Կապանի տարածքային բաժնի կողմից, ապահովելով մարզի բնակավայրերի 90% ծածկությը:

45. Հեռարձակվում է թվային 8 ծրագիր, ինչպես նաև մարզային <<Սոսի TV>> և Կապանում՝ կարելային <<Խուտուփ TV>> տեղական ծրագրերը: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է նաև <<Հանրային ռադիոն>>, որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

### **3.5. Հանրային ենթակառուցվածքներ**

**46. Ծանապարհներ:** << Սյունիքի մարզն ընդգրկում է 359.6 կմ միջանական նշանակության, 166.25 կմ հանրապետական նշանակության և 515.2 կմ մարզային (տեղական) նշանակության բնդիանուր օտագործման ավտոմոբիլային ճանապարհներ:


Այսօւակ 6 Մարզում ճանապարհային ցանցի խտությունը

Նշանակություն	Երկարությունը, (կմ)	Խտությունը 1կմ. ք հաշվով (կմ /կմ ք)	Խտությունը 10 000 բնակչի հաշվով , (կմ/10 000 բնակիչ)
<b>Միջպետական</b>	359.6	0.08	25.8
<b>Հանրապետական</b>	166.25	0.036	8.6
<b>Մարզային (տեղական)</b>	515.2	0.115	36.9
<b>Ընդհանուր</b>	1041.05	0.231	71.3

47. « Սյունիքի մարզով են անցնում Մ-2 Երևան-Մեղրի-Իրանի հալամական Հանրապետություն միջապետական ճանապարհը, որին Գորիս քաղաքին մոտ միանում է «-ն Արցախին կապող իհմնական ճանապարհը: Մ-2 ավտոճանապարհով են իրականացվում Իրանի հալամական Հանրապետությունից Ներմուծվող և արտահանվող « բեռնափոխադրումները:

48. Վերլուծությունները թույլ են տալիս ենթադրելու, որ Երևանից հարավային ուղղությամբ ճանապարհների տեսակարար կշիռը <<-ում աստիճանաբար ավելանում է, իսկ կապիտալ նորոգված ճանապարհների տեսակարար կշիռը՝ նվազում:

**Գծապատճեր 5. << Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների կշիռ <<-ում և կապիտալ նորոգման աստիճանը**



Աղյուս՝ ՀՀ Կառավարության 13.02.2014թ. N 265-Ն որոշմամբ, մարզպետարանների վերուժություններ:

49. Որպես ճանապարհաշինական ենթակառուցվածքների բարելավում անհրաժեշտ է նշել Հյուսիս-Հարավ ճանապարհի կառուցման գործընթացը, որն էական ազդեցություն կունենա թեոնա և ուղևորափոխադրումների ժամանակի կրճատման, հետևաբար՝ հինգնարդերի նվազեցման վրա:


**50. Օդային տրանսպորտ:** << Սյունիքի մարզում գործող օդանավակայաններ չկան, նախկինում օդանավակայաններ էին գործում Կապան, Սիսիան, Գորիս, Մեղրի քաղաքներում, նախատեսվում է փոքր ավիացիայի միջոցով վերագործարկել Կապանի օդանավակայանը:

**51. Էներգետիկ ենթակառուցվածքներ:** Մարզի բոլոր բնակավայրերը միացված են Էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան և առանց լրտք վթարների էլեկտրամատակարարմամբ: Մարզում առկա է Էլեկտրաէներգիայի բաշխման գարգացած ցանց, որը միացված է նաև ԻԻՀ-ը և Արցախին: << հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների համաձայն 2017թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում էլեկտրաէներգիա են արտադրել 52 փոքր ՀԷԿ-եր, տարեկան մոտ 203 մլն.կվտժ՝ 70081 կՎտ ընդհանուր հզրությամբ: Միևնույն ժամանակ, կառուցման փուլում են գտնվում ևս 9 փոքր ՀԷԿ-եր՝ 19983 կՎտ ընդհանուր հզրությամբ: Փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա մոտ 75 մլն.կվտժ –ով:

**52. Սիսիանի տարածաշրջանի «Կարկա» երկրաշերմային հարթակում իրականացվում են ուսումնասիրություններ՝ երկրաշերմային էներգիայի արտադրության նպատակով: Մարզի ողջ տարածքով է անցնում իրան - Հայաստան գազատարը, սակայն եթե հանրապետությունում գազամատակարարումը ավարտվել է համայնքների 90%-ում, ապա Սյունիքում այն կազմում է 35%: Ընդ որում այն իրականացվել է մարզի համեմատաբար խոշոր բնակավայրերում՝ Կապան, Գորիս, Սիսիան, Քաջարան քաղաքներում: Ներկայում իրականացվում է Ազարակ, Մեղրի քաղաքների գազիֆիկացման ծրագիրը:**

**53. Արտադրական կարիքների համար տրամադրված գազի տեսակարար կշռի և արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշռի հարաբերությամբ << Սյունիքի մարզի ցուցանիշը <<-ում ամենափոքրն է:**

**Գծապատկեր 6. <<-ում ըստ մարզերի և Երևան քաղաքի արտադրական կարիքների համար տրամադրված գազի տեսակարար կշռի և արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշռի հարաբերությունը:**




Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների վերլուծություն, << բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2015թ., էջ 172, և Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, էջ 27:

Հղում՝ [http://armstat.am/file/article/b\\_f\\_2016\\_5.pdf](http://armstat.am/file/article/b_f_2016_5.pdf) և [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_10.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_10.pdf)

**54. Կեղտաջրերի և կոշտ թափոնների կառավարման ենթակառուցվածքներ:** << Սյունիքի մարզի, ինչպես և Վայուց Ձորի և Արարատի մարզի բոլոր քաղաքներն ունեն կոյուղու համակարգ, սակայն մաքրում իրականացվում է միայն Քաջարան քաղաքում, որը սպասարկում է մարզի բնակչության 5%, մնացած քաղաքների կոյուղին միացված է հոսող գետերին, լցում մոտակա ձորերը կամ այլ կերպ են աղտոտում շրջակա միջավայրը:


#### Գծապատկեր 7. << Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի կոյուղու համակարգի մաշվածության աստիճանը:



Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների վերլուծություն, << բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2015թ., էջ 160: Հղում՝ <http://armstat.am/am/?nid=82&id=1829>

55. Մարզի 6 քաղաքային և 8 գյուղական բնակավայրերում, որոնցում բնակվում են մարզի 72% բնակչությունը, աղբահանությունն իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից: 6 քաղաք (Կապան, Քաջարան, Սիսիան, Գորիս, Մեղրի, Ագարակ) ունեն աղբահանության համար նախատեսված մասնագիտացված մեքենաներ, որոնցով սպասարկում են մարզի բնակչության 67%: Աղբահանություն կազմակերպող համայնքներում հավաքված աղբը տեղափոխվում է բաց աղբավայրեր: Մարզում կոչտ թափոնների վերամշակման գործարաններ չկան: << Սյունիքի մարզում գործում է 6 աղբավայր, որոնք կառավարվում են համայնքների կողմից, վտանգավոր թափոնների կառավարումն իրականացվում է մասնավոր ընկերության կողմից:

#### Գծապատկեր 8. Կազմակերպություններում առաջացած թափոններ 1 քառ. կմ -ի հաշվով՝ համեմատած ազգային միջինի հետ:



Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների վերլուծություն, Շրջակա միջավայրը և բնական պաշարները <<-ում 2015թ, էջ 66-67: Հղում՝ [http://armstat.am/file/article/eco\\_book\\_2015\\_10.pdf](http://armstat.am/file/article/eco_book_2015_10.pdf)


56. << Սյունիքի մարզի ցուցանիշը պայմանավորված է լեռնահանքային արդյունաբերության կազմակերպությունների գործունեությամբ:

57. **Զրամատակարարում:** << Սյունիքի մարզի բոլոր բնակավայրերը ունեն կայուն զրամատակարարում: Մարզի 26 համայնքներում զրամատակարարման և զրահեռացման համակարգերի շահագործումն իրականացվում է <<Վեոլիա Ձոլր>> ՓԲԸ-ի համապատասխան տեղամասերի կողմից: << Սյունիքի մարզի բնակչության 90% ունի 8 և ավելի ժամ զրամատակարարում:

### 3.6. Ներքին արտադրանք և եկամուտներ


58. Որևէ տարածքի տնտեսական զարգացման մասին խոսելիս, մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ-ն) ամենաօգտագործված ցուցանիշներից մեկն է: Տարածքային անհամաշափությունները Հայաստանում ակնհայտ են, թեև անհամաշափությունը Հայաստանի բոլոր տասը մարզերի և Երևանի միջև չնչին չափով նվազել է 2009-2014թթ. ժամանակահատվածում:

#### Գծապատկեր 9 Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի տարածքային մասնաբաժինները, 2009թ. և 2014թ.



Աղբյուր՝ << 2016-2025թթ տարածքային զարգացման ռազմավարություն:

**Գծապատկեր 10. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ 2009 և 2014թթ.**




Աղբյուր՝ << 2016-2025թթ տարածքային զարգացման ռազմավարություն:

Հղում՝ [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf)

59. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2015թ. 2009թ. համեմատ ՀՀ Սյունիքի մարզում աճել է 3.37 անգամ, Վայոց Ձորում՝ 2.85 անգամ, Արարատում՝ 2.33 անգամ:


**Գծապատկեր 11. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, որպես ազգային միջինի %, 2015**



Աղբյուր՝ << 2016-2025թթ տարածքային զարգացման ռազմավարություն:

Հղում՝ [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf)

**Գծապատկեր 12. Միջին ամսական անվանական աշխատավարձ՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ, 2011 – 2015թ.**




Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 98-99:

Հղում՝ [http://armstat.am/file/article/sv\\_12\\_15a\\_142.pdf](http://armstat.am/file/article/sv_12_15a_142.pdf)

60. << Սյունիքի մարզում պետական հատվածում աշխատողների աշխատավարձերը հանրապետության պետական հատվածում առկա միջին ցուցանիշից շուրջ 30% ցածր են, իսկ ոչ պետական հատվածում շուրջ 50% բարձր քան հանրապետության ոչ պետական հատվածում առկա աշխատավարձերը։ Մարզում ոչ պետական հատվածում միջին աշխատավարձը գերազանցում է պետական հատվածի աշխատավարձերը շուրջ 2.4 անգամ։


**Գծապատկեր 13. Տնային տնտեսությունների դրամական եկամուտները՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ,**



Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 218:

Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_20.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_20.pdf)

**Գծապատկեր 14 <<, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի տնային տնտեսությունների դրամական եկամուտները աղյուրները**



Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 218:


Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_20.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_20.pdf)

61. Միջին ամսական անվանական աշխատավարձը << Սյունիքի մարզում ամենաբարձրն է՝ լեռնահանքային արդյունաբերության հաշվին: Այս և հաջորդ բոլոր ցուցանիշներով Սյունիքը <<-ում զբաղեցնում է առաջատար դիրքեր, սակայն այդ ցուցանիշները բացարձակ կախվածության մեջ են լեռնահանքային արդյունաբերությունից: Սյունիքի տնտեսությունը կարիք ունի դիվերսիֆիկացման, քանի որ տնտեսության մեկ ճյուղից բարձր կախվածությունը առաջացնում է ռիսկեր և խնդիրներ: Չնայած մարզում տարածաշրջանների կտրվածքով պաշտոնական վերլուծություններ չեն իրականացվում, սակայն ակնհայտ է, որ մարզի բաձր ցուցանիշները ապահովվում են այն տարածաշրջանները, որտեղ զարգացած է լեռնահանքային արդյունաբերությունը:

### 3.7. Զբաղվածություն

62. 2015թ-ին, << Սյունիքի մարզի տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմել է 55100 մարդ կամ 68.3%: Այս տվյալի հիմքում դիտարկվում են լուրջ տարբերություններ տղամարդկանց (86.2%) և կանանց (52%), ինչպես նաև քաղաքային (63.2%) և գյուղական (78.4%) տարածքների միջև: Հարկ է նշել, որ դիտարկվող մարզերից միայն Սյունիքում և միայն կանանց տնտեսական ակտիվությունն է ցածր հանրապետական միջինից(54.3%): Տնտեսապես ակտիվ բնակչության քանակությունը Սյունիքի մարզում նվազում է, և 69.5 հազարից (հանրապետության 5.0% ակտիվ բնակչության) հասել է 55.1 հազար մարդ (հանրապետության ակտիվ բնակչության 4.2%):

**Գծապատկեր 15 <<-ում, Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերում տնտեսական ակտիվության մակարդակը, ընդհանուր, ըստ սեռի ու ըստ բնակչության տեսակի (%), 2015թ.**




Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 87:

Հղումը՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_16.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf)

62. 2015թ-ին, Սյունիքում գործազրկության մակարդակը կազմում էր 15.7% (տղամարդիկ՝ 18%, կանայք՝ 12.2%): Հատկանշական է, որ զարգացած լեռնահանքային արդյունաբերություն ունեցող Սյունիքում տղամարդկանց գործազրկության մակարդակը (18%), բարձր է << ցուցանիշից (17.6%):

**Գծապատկեր 16. ՀՀ-ում, Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերում գործազրկության մակարդակը, ընդհանուր, ըստ սեռի ու ըստ բնակչավայրի տեսակի (%), 2015թ.**




Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 93:

Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_16.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf)

63. ՀՀ Սյունիքի մարզում 2015թ.-ին 2011թ. համեմատ գործազրկությունն անհամեմատ ավելի շատ է աճել, քան դիտարկվող այլ մարզերում և ՀՀ-ում:

**Գծապատկեր 17 ՀՀ-ում, Սյունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերում գործազրկության մակարդակի փոփոխությունը 2015թ.-ին 2011թ. համեմատ (%) , 2015թ.**




Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 93:

Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_16.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf)

64. Ոչ ֆորմալ գրավածությունը ՀՀ-ում կազմում է 47.7%: Ութ մարզերում ոչ պաշտոնական գրավածության հարաբերական ծավալը գերազանցում է միջինը: ՀՀ Սյունիքի մարզում այդ ցուցանիշը կազմում է 36.2%: Այս երևոյթը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտում գրավածության առանձնահատկություններով:

**Գծապատկեր 18 Ոչ ֆորմալ գրավածությունը ՀՀ-ում (% տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ) 2015թ.**



Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 91:

Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_16.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf)

65. Չնայած պաշտոնական տվյալներով Սյունիքում գործազրկության մակարդակը ցածր է << միջինից, սակայն ըստ մարզի տարածաշրջանների ցուցանիշները բավականին տարբեր են: Գործազրկության մակարդակը և կանացի գործազրկությունը ամենաբարձրն են Կապան քաղաքում՝ հանրապետական ցուցանիշից մոտ 2 անգամ ավել:


66. 2015 թվականին մարզում ստեղծվել են 47 նոր կազմակերպություններ, փակվել 4-ը, ստեղծվել 132 նոր աշխատատեղ, փակվել՝ 32-ը:

### 3.8. Ռեգիոնալ տնտեսական կառուցվածք, հիմնական ոլորտներ

67. << Սյունիքի մարզը գրավում է ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունի բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանում է հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը: Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են: 2015թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները << համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են. արդյունաբերություն՝ 13.3%, գյուղատնտեսություն՝ 7%, շինարարություն՝ 5%, մանրածախ առևտուր՝ 1.2%, ծառայություններ՝ 1.7%: Հաշվի առնելով, որ մարզում բնակվում են << բնակչության շուրջ 4.65%, պարզ է, որ մեկ շնչի հաշվով մարզի արդյունաբերական արտադրանքը շուրջ է 2.86 ավել է քան միջին հանրապետական ցուցանիշը, գյուղատնտեսությունը՝ շուրջ 1.5 անգամ, շինարարությունը՝ 1.07 անգամ, իսկ առևտուրը և ծառայությունները կազմում են մեկ բնակչի համար հաշվարկված միջին հանրապետական ցուցանիշի համապատասխանաբար 25.8% և 36.6%:

68. Արդյունաբերությունը հիմնականում զարգացած է Կապանի և Մեղրու տարածաշրջաններում, իսկ գյուղատնտեսությունը՝ Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում: Մեղրիում զարգացած է նաև պտղաբուծությունը:

Գծապատկեր 19. << Սյունիքի մարզի տնտեսության կառուցվածքը 2015թ.



Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 27, 39, 44, 57, 62:

Հղում՝ <http://armstat.am/am/?nid=82&id=1834>

69. Մարզում գործում են 138 արդյունաբերական կազմակերպություններ, այդ թվում՝ 50 ՓՀԷԿ և Որոտանի հիդրոկասկադը: Արդյունաբերական կազմակերպությունները հիմնականում կենտրոնացված են քաղաքներում, առավել խոշոր կազմակերպությունները լեռնահանքային արդյունաբերության կազմակերպություններն են՝ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ, «Ազարակի ՊՄԿ» ՓԲԸ, «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ: Սյունիքի մարզում օգտակար հանածոների արդյունահանում իրականացվում է 4 մետաղական և 17 ոչ մետաղական հանքերից, ընթացքի մեջ են ևս 4 մետաղական հանքերի շահագործման աշխատանքները:

**Աղյուսակ 7. ՀՀ, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալը, անփոփոխ գների դեպքում (2009թ.), 2009-2015թ.ժամանակահատվածում (ՀՀ դրամ):**

	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2009	2015	Փոփոխությունը 2009 - 2015թթ. ընթացքում (% միավորներով)
ՀՀ	230 992	264 121	298 509	328 246	291 290	280 394	295 592	100	128	28
Սյունիք	769 453	1 147 582	1 276 877	1 403 165	1 168 795	1 051 380	1 172 672	333	397	64
Վայոց Ձոր	128 212	138 747	139 815	161 588	172 173	206 240	187 182	56	63	8
Արարատ	231 977	270 039	281 081	355 742	336 010	331 117	369 909	100	125	25

Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 27:

Հղում՝ <http://armstat.am/am/?nid=82&id=1834>

**Աղյուսակ 8. ՀՀ, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, անփոփոխ գների դեպքում (2009թ.), 2009-2014թ.ժամանակահատվածում (ՀՀ դրամ):**


	2009	2010	2011	2012	2013	2014	2009	2014
ՀՀ	190 515	167 200	179 096	200 462	222 177	239 356	100	126
Սյունիք	272 185	226 726	272 006	331 719	366 756	414 349	143	173
Վայոց Ձոր	231 685	216 827	229 409	266 027	294 098	317 557	122	133
Արարատ	358 817	332 165	306 074	346 441	381 278	393 620	188	164

Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 39:

Հղում՝ <http://armstat.am/am/?nid=82&id=1834>

70. ՀՀ Սյունիքի մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է և Էլեկտրաէներգիայի արտադրությունը:


**Գծապատկեր 20 Սյունիքի մարզի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը 2015թ., ընթացիկ գներով**



Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 28:

Հղում՝ <http://armstat.am/am/?nid=82&id=1834>

71. Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր կենդանիների բուծում) մեջ:



Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 39:

Հղում՝ <http://armstat.am/am/?nid=82&id=1834>

#### Աղյուսակ 9. Ծառայության ծավալը մեկ շնչի հաշվով անփոփոխ գների պայմաններում (2009թ.), 2009-2014թթ. (ՀՀ դրամ)

	2009	2010	2011	2012	2013	2014	Անփոփոխ գներով մատակարարվող ծառայությունների ծավալը մեկ շնչի հաշվով (2009թ.) արտահայտված Հայաստանի միջինի %-ով	Փոփոխություն ը 2009 - 2014թթ. միջև (% միավորներով)	
							2009	2014	
ՀՀ	227 400	242 987	264 828	322 287	338 793	371 494	100	163	63
Սյունիք	47 150	56 367	61 644	82 651	96 262	103 712	21	28	7
Վայոց Ձոր	49 292	62 433	63 450	83 616	125 986	129 010	22	35	13
Արարատ	36 760	40 072	42 638	50 629	64 306	64 983	16	17	1

Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 57:

Հղում՝ <http://armstat.am/am/?nid=82&id=1834>

72. ՀՀ Սյունիքի մարզը 1 շնչի հաշվով արտահանման ծավալով ՀՀ-ում առաջատարն է և ազգային միջինից ցուցանիշը 2014թ.-ին բարձր է եղել 4.3 անգամ, ի տարբերություն դիտարկվող մարզերի:

#### Աղյուսակ 10. Մեկ շնչի հաշվով արտահանման ծավալները, 2008 – 2014թթ. (ՀՀ դրամ)

					Մեկ շնչի հաշվով արտահանման ծավալի աճը, 2008- 2014թթ. (2008 = 100 %)
	2008	2014	Ազգային միջինի %, 2008թ.	Ազգային միջինի %, 2014թ.	
ՀՀ	109 600	223 419	100		204
Սյունիք	304 087	980 140	277	439	322
Վայոց Ձոր	34 671	51 505	32	23	149
Արարատ	83 397	145 179	76	65	174

Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 106:

Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_18.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_18.pdf)

73. ՀՀ Սյունիքի մարզում առկա է զգայի գրոսաշրջային ներուժ: Մարզի գրոսաշրջային ներուժը ներկայացված է Սյունիքի հարուստ, գեղատեսիլ և առողջարար բնությամբ, անտառներով, լեռներով, պատմամշակութային արժեքներով, բնության հուշարձաններով, բուժիչ ջրաղբյուրներով և ենթակառուցվածքներով:

74. Մարզի տարածքում գործում են մոտ 50 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, որոնք ցրված են մարզի ողջ տարածքով:

75. Տաթևեր ճոպանուղու շահագործումը լրացուցիչ խթան հանդիսացավ գրոսաշրջության զարգացման համար:

76. «Հարաբատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում գրոսաշրջության զարգացումը պետք է դիտարկել մեկ ընդհանուր համակարգում, քանի որ գրոսաշրջիկները Երևանից մինչև Իրանի Խալամական Հանրապետության սահման հնարավորություն կստանան մեկ երթուղու վրա այցելել խոր Վիրապ, Նորավանք, Զորաց քարերի աստղադիտարան, Տաթև և այլն»:

### 3.9. Կրթություն, մարդկային կապիտալ


77. 2015թ. դրությամբ «Հայունիքի մարզում գործում է 53 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 4283 սանով։ 2011թ. մինչ 2015թ. նախադպրոցական հաստատությունների թիվն ավելացել է 3-ով, 50-ից դառնալով 53, սաների թիվն աճել է 283-ով։ Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների թվաքանակի աճը պայմանավորված է նրանով, որ հաճախ ծնողները անցնում են աշխատանքի՝ մինչև երեխայի դպրոց գնալը։ Միևնույն ժամանակ, վերլուծելով 1000 բնակչի հաշվով նախադպրոցական հաստատությունների վիճակը մարզում պարզ է դառնում, որ մարզի ապահովվածությունը ՆՈՒՀ-երով շուրջ 59%-ով բարձր է քան միջին հանրապետական ցուցանիշը։ Միևնույն ժամանակ մարզի 10000 բնակչի հաշվով երեխաների հաճախելիությունը ՆՈՒՀ շուրջ 27%-ով ավելի բարձր է, քան միջին հանրապետական ցուցանիշը, շուրջ 60%-ով էլ բարձր է մանկավարժներով ապահովումը։ Մանրամասն տվյալները բերված են հավելված 4-ում։

78. Մարզում գործում են 121 դպրոցներ, այս թիվը 2011-2015թթ. մնացել է անփոփոխ։ Մարզի աշակերտների թիվը ունի նվազման տեսնենց, 2011թ. ընդհանուր աշակերտների թիվը կազմել է շուրջ 17.7 հազար, կամ հանրապետության ընդհանուր աշակերտների 4.58%, իսկ 2015թ. արդեն 16.5 հազար, կամ ընդհանուր աշակերտների 4.52%։ Մարզում 10000 բնակչի հաշվով դպրոցների քանակը (8.68) ավելի ցածր է, քան «Հայոց Ձորի» (9.84) մարզում և ավելի բարձր, քան «Հարաբատի» մարզում (4.33) և «ՀՀ-ում» (4.80)։ «Հայունիքի մարզում Մեղրի թիվ 1, Կարճևանի, Լեհվազի, Ալվանքի, Նոնածորի, Տաշոռնի, Վարդանիսիորի, Կապանի թիվ 4, 8, Քաջարանի թիվ 5, 6, Դավիթ Բեկի, Արծվանիկի, Օխտարի, Շավի, Շիկահողի միջնակարգ դպրոցները և այլն, Գեղիի, Արծվանիկի, Շավիի, Դավիթ Բեկի, Կապանի թիվ 11 նախադպրոցական ուսումնական հաստատությունն ունեն վառարանային ջեռուցում։ Հանրակրթական դպրոցների մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է հավելված 5-ում։

79. «Հայունիքի մարզում «ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ գործում է 1 նախնական (արհեստագործական), 7 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնցից 4-ում իրականացվում են նաև նախնական (արհեստագործական) կրթական ծրագրեր և 1 կրթահամալիր, որտեղ նույնական իրականացվում է նախնական (արհեստագործական) կրթական ծրագրի։ Մարզում նախնական (արհեստագործական) կրթական ծրագրով ուսում են ստանում 369 ուսանող, կամ հանրապետության ուսանողների 5.4%-ը, իսկ միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ 1264 ուսանող, կամ հանրապետության ուսանողների շուրջ 5.2%-ը։ Միաժամանակ, անհրաժեշտ է աջակցել նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ուսումնական հաստատություններին՝ ուսանողների արտադրական պրակտիկան մարզում կազմակերպելու, ինչպես նաև գործատու և ուսումնական հաստատություն կապը զարգացնելու, շրջանավարտներին աշխատանքի տեղավորման և գործընթացը շարունակական դարձնելու հարցերում։

80. << Սյունիքի մարզում գործում են 1 ԲՈՒՀ, 3 ԲՈՒՀ-ի մասնաճյուղեր, որտեղ սովորում են 1720 ուսանող, կամ << ուսանողների 2.16%-ը: Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններում ուսուցանվում են մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը միտված և աշխատաշուկաի պահանջներից բխող մասնագիտություններ, որոնք վերանայվում են ելեկտր մարզի զարգացման առաջնայնություններից՝ ներդրվում են նոր մասնագիտություններ:

**Գծապատկեր 22. << և Սյունիքի մարզի բարձրագույն ուսումնական հաստատությունների հաճախողների թվաքանակը 2011-2015թթ. (2011թ.՝ 100%):**



Աղյուրը՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 142:


Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_19.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

81. << Սյունիքի մարզում ուսանողների թվաքանակի կրճատումը համարելի է <<-ում թվաքանակի կրճատման հետ, ինչը պայմանավորված է բնակչության թվի նվազմամբ: Մարզում ԲՈՒՀ-երի առկայությունը հնարավորություն է տալս կանխել բարձրագույն կրթությամբ մարդկանց արտագաղթը, քանի որ ոչ պաշտոնական տվյալների համաձայն Երևանում բարձրագույն կրթություն ստացած սյունեցիների մոտ կեսը չեն վերադառնում Սյունիք:

### 3.10. Սոցիալական ներառում

82. << Սյունիքի մարզում, տնային տնտեսությունների թիվը կազմում է 38345, որոնց 69%-ը բնակվում են քաղաքային համայնքներում:

**Գծապատկեր 23. <<, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի տնային տնտեսությունները ըստ բնակչավայրի տեսակի:**



Աղյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

83. Տնային տնտեսությունների ապահովածությունը բնակմակերեսով գյուղական համայնքներում գտնվում է բավականին բարձր մակարդակի վրա և 11%-ով գերազանցում է

միջին հանրապետական ցուցանիշը, իսկ քաղաքային համայնքներում մոտ է միջին հանրապետական ցուցանիշին:

**Աղյուսակ 11. Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, մ<sup>2</sup>**

	Ընդամենը			այդ թվում համայնքներում					
				քաղաքային			գյուղական		
	2013	2014	2015	2013	2014	2015	2013	2014	2015
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	30.9	31.4	31.6	26.2	26.7	26.9	39.0	39.5	39.8
<b>Սյունիք</b>	<b>29.6</b>	<b>29.8</b>	<b>30.1</b>	<b>22.8</b>	<b>23.1</b>	<b>23.2</b>	<b>43.4</b>	<b>43.7</b>	<b>44.3</b>
Վայոց Ձոր	44.4	44.9	45.2	29.8	30.1	30.3	52.4	52.9	53.3
Արարատ	32.4	32.5	32.7	22.2	22.4	22.7	36.5	36.5	36.7

ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 171:


Հղումը՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_19.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

84. << Սյունիքի մարզում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում փաստագրվել են 4067 ընտանիք: Ընտանեկան և սոցիալական նպաստ 2015թ. ստացել են 3641 ընտանիք: Այս թիվը 2012թ. համեմատ գրեթե չի փոփոխվել:

**Գծապատկեր 24. << Սյունիքի մարզում ընտանեկան և սոցիալական նպաստ ստացողների տեսակարար կշիռը ըստ տարածաշրջանների:**

Ընտանեկան նպաստ

Սոցիալական նպաստ




Աղբյուրը՝ Սյունիքի մարզի ՍԱՊԾ-ների տվյալների հիման վրա կատարված վերլուծություն:

85. << Սյունիքի մարզում աղքատության մակարդակն 2015թ.-ին կազմել է 24.5%, ծայրահեռ աղքատությունը՝ 0.7%, սակայն աղքատության մակարդակը նվազում է ավելի դանդաղ, քան ՀՀ-ում և դիտարկվող մարզերում:


**Գծապատկեր 25. << Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի աղքատության և ծայրահեռ աղքատության փոփոխությունը 2011-2015թթ., 2011թ. 100%:**

Աղքատություն

Ծայրահեռ աղքատություն



**Գծապատկեր 26. Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի աղքատության և ծայրահեռ աղքատության մակարդակը 2015թ, <<-ն 100%:**



Աղբյուր՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 215:


Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_20.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_20.pdf)

86. Մարզի առողջապահական համակարգում 2015թ. գործել են 18 ամբողբառորդություններ և հիմնարկներ, որը 2012թ. ցուցանիշից պակաս է 8-ով:

87. Մարզի ապահովածությունը բժշկական կադրերով (20.7 բժիշկ 10 000 բնակչի հաշվով) ավելի քան կրկնակի ցածր է քանի միջին հանրապետական ցուցանիշը (43.74 բժիշկ 10 000 բնակչի հաշվով): Միջին բուժանձնակազմի հետ վիճակն ավելի լավ է, այստեղ տարբերությունը մարզի (56 մասնագետ 10 000 բնակչի հաշվով) և հանրապետության (58,80 մասնագետ 10 000 բնակչի հաշվով) ցուցանիշների միջև չնչին է: Հիվանդանոցային մահճականների քանակով մարզը կրկին զիջում է միջին հանրապետական ցուցանիշին, մարզում առկա է 29.3 մահճակալ 10 000 բնակչի համար, հանրապետության 41.8 դիմաց: Մանրամասն տվյալները ներկայացված են հավելված 6-ում:

88. << Սյունիքի մարզում գործում են 2 թատրոն, 4 թանգարան, 129 գրադարան:

**Գծապատկեր 27. <<, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերի թատրոններ, թանգարաններ, գրադարաններ հաճախումների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով 2011-2015թթ., 2011թ. 100%:**



Աղբյուր՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 145-156:

Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_19.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)


### **3.11. Բնապահպանական խնդիրներ, էներգաարդյունավետություն**

**89. Օդի որակ:** Մարզի օդային ավագան տարեկան արտանետվում էն 8.9 հազ. տոննա նյութեր, որը կազմում է ՀՀ ցուցանիշի մոտ 7%-ը: Մարզի տարածքում գործող կազմակերպությունները որսացել են 424 տոննա վնասակար նյութեր: Մանրամասն տեղեկատվությունը՝ հավելված 7-ում:

**90. Հողի որակ:** << Սյունիքի մարզում բարելավման կարիք ունեն գյուղատնտեսական նշանակության հողերի 4.1%-ը, այն դեպքում, եթե <<-ում այդ թիվը 8.9% է: << և Սյունիքի մարզի բարելավման կարիք ունեցող գյուղատնտեսական նշանակության հողերի գերակշիռ մասը քարքարուտ և թափոններով աղտօնված հողերն են:

Գծապատկեր 28. << և Սյունիքի մարզի բարելավման կարիք ունեցող գյուղ. Նշանակության հողերը ըստ տեսակի տեսակարար կշիռները:

**Գծապատկեր 29. <<և Սյունիքի մարզի բարելավման կարիք ունեցող հողերի տեսակարար կշիռները:**




Աղբյուր՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով:

Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_19.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

91. ՄԵԿ բնակչի հաշվով կազմակերպություններում առաջացած թափոնների քանակով 2015թ. Սյունիքի մարզի ցուցանիշը գերազանցում է հանրապետական ցուցանիշը **9.8 անգամ**, այն դեպքում, եթե այդ ցուցանիշը << Վայոց Ձորի մարզում 0.3%-է, իսկ Արարատի մարզում՝ 0.002%:

**Գծապատճեր 30. <<Այունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերում տարվա ընթացքում կազմակերպություններում առաջազարդ թափոնների քանակը մեկ բնակչի հաշվով 2011-2015թթ., 2011թ. 100%:**




Աղբյուր՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մագագեռ և Երևան քաղաքը թվերով, էջ 167:


Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_14\\_19.pdf](http://armstat.am/file/article/marz_14_19.pdf)

**92. Զրի որակ:** 2015թ. ՀՀ Սյունիքի մարզում ջրօգտագործման ծավալը կազմել է ՀՀ ցուցանիշի 4%-ը, կեղտաջրերի հեռացման ծավալը՝ 6.3%-ը:

Գծապատկեր 31. ՀՀ, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերում տարվա ընթացքում ջրօգտագործման ծավալները 2011-2015թթ., 2011թ. 100%:




Գծապատկեր 32. ՀՀ, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերում տարվա ընթացքում կեղտաջրերի հեռացման ծավալները 2011-2015թթ., 2011թ. 100%:



Աղբյուր՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 163:

Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_19.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

Գծապատկեր 33. ՀՀ, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի հեռացված կեղտաջրերը ըստ որակի՝ 2015թ.:



Աղբյուր՝ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, էջ 165:

Հղում՝ [http://armstat.am/file/article/marz\\_2016\\_19.pdf](http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf)

**93. ՀՀ Սյունիքի մարզում 2016 թվականի ընթացքում մանրէաբանական ցուցանիշներով հետազոտվել է խմելու ջրի 11923 նմուշի հետազոտություն, որից արձանագրվել 1492 շեղում (12.5%): Մանրէաբանական ցուցանիշներով շեղումներ արձանագրվել են՝ Քաջարանում, Մեղրիում, Կապանում՝ Գեղի և Չանախչի ՋՄԿ-ից սնվող ներքին ցանցում, Ուժանիս, Եղվարդ, Ագարակ, Խոդանոց, Վերին Գյողաքլու, Աղվանի, Տանձավեր, Ներքին Խոտանան, Շրվենանց, Վերին Խոտանան, Տավրոս, Նորաշենիկ, Անտառաշատ, Օխտար, Վանեկ, Գեղանուշ, Գոմարան, Արծվանիկ, Դավիթ-Բեկ, Չափնի, Անաքար, Կաղնուտ, Շավ, Ներքին Հանդ, Շիկահող, Սրաշեն, Ներքին Գյողաքլու, Վերիշեկ, Խնձորեսկ, Ակներ, Աղիտու, Նորավան, Դարբաս, Արևիս, Բնունիս, Տոլորս, Ալվանք, Շվանիձոր, Նոնածոր Խնձածիս, Սվարանց, Տաթև, Գետաթաղ, Թանահատ, Լծեն, Արևիս, Շենաթաղ, Լեհվազ: Մնացորդային ազատ քլոր ցուցանիշով հետազոտվել է 3431 նմուշ՝ 12 շեղում (0.3%): Մնացորդային ազատ քլոր ցուցանիշով շեղումներ արձանագրվել են՝ Չանախչի ՋՄԿ-ում, Յուղոտ Ձորի ՋՄԿ-ում և Մեղրիի Մեթան ջրմուղներում:**

**94. Կազմակերպություններում առաջացած թափոնները հիմնականում առաջանում են մարզի հարավային՝ Կապանի և Մեղրու տարածաշրջաններում, որտեղ կան լեռնահանքային արդյունաբերության կազմակերպություններ: Այդ կազմակերպությունները գործում են Ողջի և Մեղրի գետերի ավագաններում:**

95. << Սյունիքի մարզի հատուկ պահպանվող տարածքների մասին տեղեկատվությունը ներկայացված է բնական պայմաններ բաժնում:

96. << Սյունիքի մարզում << կառավարությունը մի շարք միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ համատեղ (Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության իհմնադրամ (<ՎԵԷ>, ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ, ՎիվաՍԵԼ ՄՏՍ, Քաղաքապետների դաշինք և այլն) հանրային նշանակության օբյեկտներում իրականացրել և շարունակում է իրականացնել էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրեր, որոնց իրականացման արդյունքում նախատեսվում է էապես կրճատել վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումները մթնոլորտ:

97. <**ՎԵԷ**> «էներգախնայողության ծրագրի» շրջանակներում իրականացված աշխատանքներ՝

- 1) Կապան քաղաքի փողոցային լուսավորում,
- 2) Սիսիան քաղաքի փողոցային լուսավորում,
- 3) Բարձրավոլտ էլեկտրական ցանցերի Գորիս և Զանգեզուր մասնաճյուղերում էներգախնայողության միջոցառումներ,

«Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքներ՝

- 1) Գորիս քաղաքի փողոցային լուսավորում (3.75 կմ երկարություն),
- 2) Կապան քաղաքի փողոցային լուսավորում (1.0 կմ երկարություն),
- 3) Քաջարան քաղաքի փողոցային լուսավորում (0., կմ երկարություն),


Վիվա ՍԵԼ ՄՏՍ-ի «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքներ՝

- 1) Նժդեհ, Ցղունի գյուղերի փողոցային լուսավորում:»:


### **3.12. Մարզային և տեղական կարողությունների զարգացում**

98. << Սյունիքի մարզակազմից բարձրագույն կրթություն ունեն 94%-ը, համայնքային ծառայողներից՝ 94%-ը:

**Այլուսակ 12. «Սյունիքի մարզպետարանի կառավարման կազմակերպական կառուցվածքը**




Գծապատկեր 34. << Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերում մարզպետարանի մեկ աշխատողին ընկնող բնակչության թիվը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ:



Աղյուրը՝ մարզպետարանների պաշտոնական կայքերում առկա տվյալների վերլուծություն:

99. << Սյունիքի մարզում 72 համայնքի ղեկավարներից բարձրագույն կրթություն ունեն 35-ը կամ 48.6%-ը:


Գծապատկեր 35. << Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերում համայնքապետարանների մեկ աշխատողին ընկնող բնակչության թիվը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ:



Աղյուրը՝ մարզպետարանների պաշտոնական կայքերում առկա տվյալների վերլուծություն:

100. Ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի պատկերը բավականին համադրելի է:

Գծապատկեր 36 << Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերում համայնքապետարանների մեկ աշխատողին ընկնող բնակչության թիվը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ, ըստ քաղաքային և գյուղական համայնքների



Աղյուրը՝ մարզպետարանների պաշտոնական կայքերում առկա տվյալների վերլուծություն:


101. 2015թ. 2011թ. համեմատությամբ << Սյունիքի մարզի համայնքների եկամուտները աճել են 51%-ով, սեփական եկամուտները՝ 47%-ով: Ըստ որում, 2011թ. համայնքների սեփական

Եկամուտները ընդհանուր եկամուտների մեջ կազմել են 33%, իսկ 2015թ.-ին՝ 32%: Կարելի է փաստել, որ << Սյունիքի մարզում կա որոշակի ֆինանսական, կրթական, ինտելեկտուալ կարողություններ՝ տեղական խնդիրների վերհանման և լուծման համար:

### 3.13. Այլ խնդիրներ

102. Հատուկ զարգացման կարիք ունեցող տարածքներ կարելի է համարել սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային համայնքները: Սյունիք մարզում լեռնային են 32, բարձր լեռնային՝ 12 բնակավայր, այդ թվում՝ Քաջարան քաղաքը: Սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային համայնքների աշխարհագրության մասին ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է ընդհանուր տեղեկություններ բաժնում ներկայացված քարտեզում:

Գծապատկեր 37. << Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի մարզերում սահմանամերձ բնակավայրերում ապրող բնակչության տեսակարար կշիռը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ



Աղբյուրը՝ << կառավարության 1998 թվականի նոյեմբերի 17-ի N 713-Ն որոշում, ԱՎԾ տվյալների վերլուծություն:

## IV Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների վերլուծություն

103. ՈՒԹԿՀՎ վերլուծությունը ապահովում է տարածքային զարգացման ոլորտում ներկայիս իրավիճակի ամփոփ նկարագիրը:

**Այուսակ 13. Սյունիքի մարզի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն**

<b>Ուժեղ կողմեր</b>	<b>Թույլ կողմեր</b>
<b>Բնական պայմաններ, ժողովրդագրություն և քաղաքային զարգացում</b>	
<ul style="list-style-type: none"> <li>– Ուրբանիզացիայի բարձր մակարդակ 67.4%</li> <li>– Քաղաքների համաչափ ցրվածություն մարզի տարածքում</li> <li>– Հանրապետական և մարզային հեռուստատեսության հասանելիություն ողջ մարզի տարածքում բարձր ծածկույթ</li> <li>– Օգտակար հանածոների արդյունահանման մեջ փորձ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>– Բնակչության արտագաղթ</li> <li>– Ցածր բնական աճի տեմպ՝ 0,98պրոմիլ</li> <li>– Բնակչության ցածր խտություն՝ 31 մարդ/քառ.կմ</li> <li>– 3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերի ամրացման-վերականգնման կամ վերաբնակեցման ծրագրերի իրականացման համար ֆինանսավորման բացակայություն</li> </ul>
<b>Տրանսպորտ, կապ և փեղեեկարգվական հասարակություն</b>	
–	<ul style="list-style-type: none"> <li>– Ուղևորա և բեռնափոխադրումների կախվածությունը միայն մեկ տեսակի՝ ավտոմոբիլային տրանսպորտից</li> <li>– Դեպի ազգային կենտրոններ դժվար հասանելիություն</li> <li>– Թույլ զարգացած հանրային տրանսպորտային ծառայություններ</li> </ul>
<b>Հանրային ենթակառուցվածքներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>– Զարգացած ավտոճանապարհային ցանց մարզի ներսում</li> <li>– Քաղաքային համայնքներում ջրամատակարարման նորոգված ցանց և կայուն ջրամատակարարում</li> <li>– Զարգացած հիդրոէներգոտիկ ենթակառուցվածքներ</li> <li>– Զարգացող երկրաշերմային էներգետիկ ենթակառուցվածքներ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>– Գագիֆիկացման ցածր մակարդակ</li> <li>– Ճանապարհների ոչ բավարար նորոգվածության աստիճան</li> <li>– Մարզով անցնող միջայնական ճանապարհի ցածր տարողունակություն և դժվար պայմաններ</li> <li>– Գյուղական համայնքներում կոյուղու համակարգի բացակայություն</li> <li>– Կոյուղաջրերի մաքրման կայանների բացակայություն, կոյուղաջրերով շրջակա միջավայրի աղտոտում</li> <li>– Աղբավայրերի ոչ ճիշտ տեղակայում և շահագործում ոչ բավարար ներդրումների արդյունքում</li> </ul>
<b>Ներքին արդարադանք և եկամուկներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>– Մարզերի կտրվածքով մեկ շնչի հաշվով ՀՆԱ ամենաբարձր մակարդակ (<math>\ll</math> միջինի 112%-ը)</li> <li>– Միջին ամսական աշխատավարձի բարձր մակարդակ (<math>\ll</math> միջինի 126%-ը)</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>– ՀՆԱ գգալի կախվածություն արդյունաբերության մեկ՝ լեռնահանքային արդյունաբերության ճյուղից</li> <li>– Բնակչության եկամուտների մեծ կախվածություն լեռնահանքային արդյունաբերությունից</li> <li>– Գյուղատնտեսության վարում ավանդական եղանակով</li> <li>– Օգտագործվող գյուղատնտեսական տեխնիկայի և</li> </ul>

	<p>սարքավորումների բարոյական և ֆիզիկական մաշվածության բարձր աստիճան</p> <ul style="list-style-type: none"> <li>Գյուղատնտեսական հողերի թերի օգտագործում</li> </ul>
<b>Հրաղվածություն</b>	
<ul style="list-style-type: none"> <li>Հանրապետական միջինից բարձր գրաղվածության մակարդակ</li> <li>Բնակչություն բարձր տնտեսական ակտիվություն՝ 68.3%</li> <li>—</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Գործազրկության մակարդակի անհավասարացափ բաշխվածություն մարզի ներսում</li> <li>Սահմանափակ կարողություններ ունեցող անձանց գործազրկության ավելի բարձր հավանականություն</li> </ul>
<b>Տարածաշրջանային գրնչեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>Տնտեսության մեջ արտահանող ճյուղերի առկայություն և արտահանման բարձր մակարդակ</li> <li>Տուրիստական ենթակառուցվածքների առկայություն/ Տաթևի ճոպանուղի</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Տնտեսության միանցուղ զարգացում</li> <li>Գյուղատնտեսական մեթնաների պարկի մաշվածություն, որը ազդում է գյուղատնտեսության արտադրողականության վրա</li> <li>Հակակարկտային կայանների բացակայություն</li> </ul>
<b>Կրթություն, մարդկային կապիւրալ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>Համընդիմանուր անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթության մատչելիություն/հասանելիություն,</li> <li>Նախադպրոցական հաստատությունների առկայություն,</li> <li>Նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների առկայություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Բարձրագույն կրթություն ունեցողների արտագաղթ</li> <li>Կրթական համակարգի և աշխատաշուկայի պահանջարկի միջև անհամապատասխանություն</li> <li>Սահմանափակ հնարավորություն տարեցների վերապատրաստման համար</li> <li>Թերկումայելելու վարչական դպրոցների և դասարանների առկայություն</li> </ul>
<b>Սոցիալական ներառում</b>	
<ul style="list-style-type: none"> <li>Արդյունավետ օպտիմալացված առողջապահական համակարգ</li> <li>Առաջարեմ համընդիմանուր ներառական կրթության առկայություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Սոցիալական ենթակառուցվածքների /կրթական, մարզամշակութային/ անբավարար հասանելիություն և թարմացման կարիք</li> <li>Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների բացակայություն</li> <li>Բժիշկական կարտերի պակաս</li> <li>Մայրաքաղաքի բժշկական ծառայությունների սահմանափակ հասանելիություն հեռավորության պատճառով</li> </ul>
<b>Բնապահպանական հարցեր, էներգետիկ արդյունավելություն, կիմայի փոփոխություն</b>	
<ul style="list-style-type: none"> <li>Բազմաթիվ ՀԷԿ-երի առկայություն և վերականգնվող էներգիայի արտադրություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Կազմակերպությունների գործունեության արդյունքում աղտոտվող միջավայր</li> <li>Պոչամբարների առկայություն և ծավալների շարունակական աճ</li> <li>Կոյուղու կեղտաջրերի մաքրման կայանների վատ վիճակ, բացակայություն</li> <li>Մեկ բնակչի հաշվով կազմակերպություններում առաջացած թափոնների բարձր տեսակարար կշիռ &lt;&lt; համեմատ</li> <li>Օբյեկտներում (շենքեր շինություններ, փողոցային լուսավորություն և այլն) էներգախնայողության էներգաարդունավետության ցածր մակարդակ</li> <li>Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էներգաէներգիայի արտադրության (մասնավորապես՝</li> </ul>

	արևային և հողմային) ցածր մակարդակ
<b>Տարածաշրջանային և տեղական զարգացման կարողություններ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>Մարզային կառավարման մարմինների բարձր կարողությունների/խոշորացում</li> <li>Տեղեկատվական համակարգի տեխնոլոգիաների (S&amp;S) միջոցների կիրառում մարզային և տեղական կառավարման գործընթացներում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Հասարակական կազմակերպությունների ցածր մասնակցություն</li> <li>Տեղական մակարդակում ֆինանսական ռեսուրսների սահմանափակություն՝ հատկապես ներդրումների համար</li> </ul>
<b>Այլ հարցեր</b>	
<ul style="list-style-type: none"> <li>Լեռնային, բարձր լեռնային և սահմանամերձ համայնքների՝ մարզային ցուցանիշների հետ զարգացվածության համադրելիություն, օր. Քաջարան քաղաքը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Սահմանամերձ համայնքներում բնակչող բնակչության բարձր տեսակարար կշիռ /74%-ը</li> </ul>
<b>Հնարավորություններ</b>	<b>Սպառնալիքներ</b>
<b>Բնական պայմաններ, ժողովրդագրություն և քաղաքային զարգացում</b>	
<p>Հանդիսանում է բնական պաշարներով բնական պաշարներով ամենահարուստ մարզը</p> <ul style="list-style-type: none"> <li>Հարուստ ջրային ռեսուրսների առկայություն</li> <li>Հարուստ բնական պայմաններ, գրեթե բոլոր կլիմայական գոտիների առկայություն</li> <li>Հիդրոէներգետիկ հարուստ պաշարներ</li> <li>Հատուկ պահպանվող տարածների առկայություն՝ ընդհանուր տարածքի 14.91%,</li> <li>Գյուղատնտեսական նշանակության հողահանդակների առկայություն՝ ընդհանուր տարածքի 68,12 %,</li> <li>Զբոսաշրջային գրավություն ունեցող բնական և արդյունաբերական լանդշաֆտների առկայություն, բազմաթիվ բնական հուշարձանների առկայություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Լեռնային ռեյինք և կտրտվածություն</li> <li>Սողանքային երևույթների առկայություն</li> <li>Գտնվում է սեյսմիկ գոտում</li> </ul>
<b>Տրանսպորտ, կապ և տեղեկարվական հասարակություն</b>	
<ul style="list-style-type: none"> <li>Երևան-Մերիդի- Իրանի հայամական Հանրապետության սահման միջպետական ճանապարհ անցնում է մարզով</li> <li>Կապանի օդանավակայայանի վերագործարկման հնարավորություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Զմեռային ամիսներին ճանապարհների դժվար անցանելիություն</li> <li>Բնական պայմաններով պայմանավորված ճանապարհների շահագործման համեմատաբար թանկ լինելը</li> </ul>
<b>Հանրային ենթակառուցվածքներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>Հյուսիս-հարավ ճանապարհի կառուցում</li> <li>Գազիֆիկացման հասանելիություն ԻԻՀ հետ սահմանակից լինելու արդյունքում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Միջիամայնքային տրանսպորտի թույլ զարգացվածություն ոչ բավարար ներդրումների արդյունքում</li> <li>–</li> </ul>
<b>Ներքին արդարանք և եկամուտներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>Տնտեսության այլ, ոչ հանքային ճյուղերում ներդրումների հետաքրքրվածության բարձր մակարդակ</li> <li>Գյուղատնտեսական արտադրանքի համար մեծ ներուժի առկայություն, մասնավորապես անասնաբուծության ճյուղում</li> <li>Գյուղմթերքների վերամշակման մեծ ներուժի առկայություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Լեռնահանքային արդյունաբերական արտադրանքի միջազգային գների անկայուն դինամիկա և նվազման միտումներ</li> <li>Զբոսաշրջության կենտրոնացում Երևան-Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի երկայնքով</li> <li>Մարզային և ներհամայնքային ճանապարհների ոչ բավարար վիճակ զբոսաշրջության զարգացման</li> </ul>

<ul style="list-style-type: none"> <li>– Թեթև արդյունաբերության զարգացման համար մեծ ներդրութիւն առկայություն և նախադրյալների առկայություն</li> <li>– Զբոսաշրջիկների հետաքրքրվածության բարձր մակարդակ</li> </ul>	համար
<b>Հրաղվածություն</b>	
Պետական խթանող քաղաքականության առկայություն զբաղվածության համար	Հանքարդյունաբերության ոլորտի անկայունությունը կարող է բացասաբար ազդել զբաղվածության վրա
<b>Տարածաշրջանային դրսեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>– ՀՀ և ԵՏՄ հարավային դարպաս</li> <li>– Իրանի Խոլամական Հանրապետության հետ սահմանի առկայություն</li> <li>– Մերդիում ազատ տնտեսական գոտու ստեղծման պետական քաղաքականության առկայություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>– Տնտեսության աճի դանդաղ տեմպեր</li> </ul>
<b>Կրթություն, մարդկային կապիկալ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>– Շարունակական և տարեցների կրթության կազմակերպման հնարավորություն</li> <li>– SS ոլորտի խթանման ազգային կրթական քաղաքականության առկայություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>– Ուղեղների արտահոսք</li> <li>– Գյուղական համայնքներում կադրերի բացակայություն</li> <li>– Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներ</li> </ul>
<b>Սոցիալական ներառում</b>	
<ul style="list-style-type: none"> <li>– Սահմանափակ կարողություններով անձանց նկատմամբ պետական քաղաքականության առկայություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>– Մշակույթի և ֆիզիկական կրպտուրայի նկատմամբ բնակչության հետաքրքրվածության նվազում</li> <li>–</li> </ul>
<b>Բնապահպանական հարցեր, էներգետիկ արդյունավելություն, կիմայի փոփոխություն</b>	
<ul style="list-style-type: none"> <li>– Վերականգնվող էներգետիկ ստացման ներուժ՝ հիմնված արևային օրերի, ջրային ռեսուրսների և քամու օգտագործման վրա</li> <li>– հանրային և բնակելի սեկտորում էներգախնդիրների հետաքարության և էներգաարդյունավետության միջոցառումների հնարավորություն</li> <li>– ռեսուրսների օգտագործման պետական խթանող քաղաքականության առկայություն (արև, քամի, երկրաշերմային էներգիա)</li> <li>– Պետության կողմից որդեգրած կոշտ կենցաղային թափոնների կառավարման ռազմավարություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>– Գլոբալ կիմայական փոփոխություններ</li> <li>– ՀՀԿ-երի աշխատանքային թույլատրված ռեժիմի խախտման հնարավորություն</li> <li>– Երկրաշրժերի դեպքում պոչամբարներից և արտադրություններից թունավոր նյութերի շրջակա միջավայր թափանցելու վտանգ</li> </ul>
<b>Տարածաշրջանային և դեղական զարգացման կարողություններ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>– Համայնքների խոշորացում և տեղական համայնքների ռմտեղացում</li> <li>– Միջազգային կազմակերպությունների կողմից համայնքային զարգացման ծրագրերի համար ֆինանսական ռեսուրսների առկայություն</li> </ul>	–
<b>Այլ հարցեր</b>	
–	– Քաղաքական տեսանկյունից զգայուն տեղադիրք

## V Տեսլական, նպատակներ և հիմնական գերակայություններ

### Տեսլական և ընդհանուր նպատակներ

104. Տարածքային զարգացումը ղեկավարվում է ռազմավարական տեսլականով, որի համաձայն << Սյունիքի մարզը լինելու է արագ աճող, մրցունակ և դիվերսիֆիկացված արդյունաբերությամբ, զարգացած գյուղատնտեսությամբ, զբոսաշրջային համաչափ զարգացած տարածքներով, գործազրկության և արտագաղթի ցածր տեմպեր ունեցող մարզ:

105. << Սյունիքի տարածքային զարգացման քաղաքականության ընդհանուր նպատակը մարզի բոլոր տարածքների/համայնքների տնտեսական և սոցիալական, տարածքային համաչափ և կայուն զարգացման խթանումն է՝ հաշվի առնելով առանձին տարածքների/համայնքների կարիքներն ու ռեսուրսները: Նշված ընդհանուր նպատակն ունի երեք բաղադրիչ:

- 1) առկա ներուժի հիման վրա բոլոր տարածքների մրցունակության բարձրացում՝ ստեղծելով ազգային և միջազգային տնտեսություններին արդյունավետորեն ինտեգրվելու հնարավորություն.
- 2) առավելագույն տարածքային համաչափության երաշխավորում և տնտեսության դիվերսիֆիկացիա՝ հատուկ ուշադրություն դարձնելով թույլ զարգացած և սահմանամերձ տարածքների, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա.
- 3) տարածքային զարգացման քաղաքականության և փորձի բարելավում՝ ապահովելով տարածքային ու տեղական դերակատարների ակտիվ մասնակցությունը պլանավորման և իրականացման գործընթացներում:

### 5.1. Ռազմավարական նպատակներ և հիմնական գերակայություններ

106. << Սյունիքի մարզի ռազմավարական նպատակները, 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունը հիմնված է մարզի իրավիճակի գնահատման, ամենամեծ ուժեղ կողմերի և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վրա, ինչպես ներկայացված է փաստաթյա՞թի վերլուծական մասում:

107. Ռազմավարական ուղղությունների տրամաբանությունը ապահովված է՝ համատեղելով ընդհանուր նպատակները (հորիզոնական) և գերակա թեմաները/ ոլորտները (ուղղահայց), և դրանք կապված են ազգային ռազմավարական փաստաթյա՞թերին, ինչպես ներկայացված է ստորև:

Այլուսակ 14. << Սյունիքի մարզի ռազմավարական նպատակներ և գերակայություններ.

Սյունիքի մարզի զարգացման ռազմավարության նպատակներ	Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն 2016-2025
1) << Սյունիքի մարզը կրարելավի իր մրցունակությունը և տնտեսության դիվերսիֆիկացիան՝ 2025թ.-ին 2015թ. համեմատ միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների թվաքանակը կամի առնվազն 10%-ով, ոչ լեռնահանքային արդյունաբերության և ոչ	Բոլոր մարզերում մրցունակության բարձրացում՝ հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, թույլ տալով առավել ընդարձակ ինտեգրումը ազգային ու միջազգային տնտեսությունների հետ (2025թ.-ի դրությամբ բոլոր մարզերում միջին

<p>գյուղատնտեսական ֆորմալ աշխատատեղերում գբաղված մարդկանց թվաքանակը՝ 12%-ով, ակտիվ կազմակերպությունների թվաքանակը՝ 10%-ով, ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների տևողությունը կլրճատվի 20%-ով:</p>	<p>մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների, թվաքանակը կաճի առնվազն 10%-ով՝ համեմատած 2014թ.-ի հետ:</p>	
<p>2) &lt;&lt; Սյունիքի մարզը կնվազեցնի ներքին անհամաշափությունը՝ 2025թ.-ին 2015թ. համեմատ 5%-ային կետով նվազեցնելով երկարաժամկետ գործազրկության մակարդակը՝ ուշադրություն դարձնելով կանացի գործազրկությանը, և 5%-ային կետով նվազեցնելով աղքատության մակարդակը՝ ուշադրություն դարձնելով հատուկ զարգացման կարիք ունեցող տարածքներին:</p>	<p>Տարածքներում համաշափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքների, ինչպես նաև ուսուլուների կայուն օգտագործման վրա: (2025թ.-ի դրությամբ առանձին վերցված յուրաքանչյուր մարզում մեկ շնչի հաշվով &lt;ՆԱ-Ն կգերազանցի մեկ շնչի հաշվով &lt;ՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60 տոկոսը և մեկ շնչի հաշվով &lt;ՆԱ-ի 70%-ից ցածր կգտնվի մարզերի բնակչության ոչ ավել քան 30%-ը:)</p>	
<p>3) &lt;&lt; Սյունիքի մարզում կբարելավվի տարածքային և տեղական զարգացման կառավարման կարողությունները և համակարգերը՝ մինչ 2025թ. բոլոր համայնքները կունենան նոր տեղական զարգացման պլաններ, 2025թ.-ին 2015թ. համեմատ մարզային և տեղական վարչակազմերի աշխատակիցների թիվը կնվազի 15%-ով, մարզային և համայնքային աշխատողների 80%-ը վերապատրաստում կանցնի մարզային/տեղական զարգացմանը, մարզի ամբողջ տարածքը կկառավարվի խոշորացված 8-10 համայնքապետարաններով, 2016 թ. 72-ի փոխարեն:</p>	<p>Տարածքային զարգացման քաղաքականության ու գործելակերպերի բարելավում զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում՝ տարածքային ու տեղական ու երակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով: (2017թ.-ին &lt;&lt;-ն կունենա տարածքային զարգացման քաղաքականության իրականացման մեկ ընդհանուր Տարածքային զարգացման գործառնական ծրագիր (ՏՀԳԾ), որը հիմք կհանդիսանա, ՏԿՁ բյուջետային ծրագրերի նախապատրաստման և տարածքային զարգացման նպատակներով, արտաքին աղյուրներից բյուջետային աջակցության ստացման համար:)</p>	
<p>1) Ժամանակակից և դիվերսիֆիկացված արդյունաբերության և տուրիզմի զարգացում</p>	<p>2) Գյուղատնտեսության և գյուղական տարածքների արդիականացում՝ համակցված բնապահպանության հետ</p>	<p>3) Տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացում և դիվերսիֆիկացիա</p>
<p><b>Մ Զ Ո Ւ Ի ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b></p>		
<p>Արդյունաբերության և արտահանման խթանում, զբոսաշրջություն և ՏՀՏ ոլորտ, գյուղատնտեսության ու գյուղական տարածքների արդիականացում, սննդի արդյունաբերություն և ՓՄՁ-ների ստեղծում:</p>		
<p><b>Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն 2014-2025թթ.</b></p>		

## 5.2. Ռազմավարական նպատակների և գերակա խնդիրների հիմնավորում

108. **Ռազմավարակ նպատակ 1:** << Սյունիքի մարզը կրարելավի իր մրցունակությունը և տնտեսության դիվերսիֆիկացիան՝ 2025թ.-ին 2015թ. համեմատ միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների թվաքանակը կաճի առնվազն 10%-ով, ոչ լեռնահանքային արդյունաբերության և ոչ գյուղատնտեսական ֆորմալ աշխատատեղերում զբաղված մարդկանց թվաքանակը՝ 12%-ով, ակտիվ կազմակերպությունների թվաքանակը՝ 10%-ով, ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների տևողությունը կրճատվի 20%-ով:

109. **Հիմնավորում:** << Սյունիքի մարզի տնտեսությունը ունի հստակ արտահայտված միաճյուղ զարգացում (2015թ. տնտեսության 61.9 տոկոսը կազմել է արդյունաբերությունը, իսկ արդյունաբերության 84.7 տոկոսը՝ հանքագործական արդյունաբերությունը և բացահանքերի շահագործումը): Տնտեսության նման կառուցվածքը իր մեջ պարունակում է ռիսկեր, և անհրաժեշտություն է առաջանում խթանել տնտեսության այնպիսի ճյուղերի զարգացումը, որոնք ուղղակիորեն կապված չեն լեռնահանքային արդյունաբերության հետ, այսինքն՝ իրականացնել տնտեսության դիվերսիֆիկացիա: Այս նպատակը համահունչ է << 2016-2025թ. տարածքային զարգացման ռազմավարության 1-ին և 2-րդ նպատակների հետ:

110. **Ռազմավարակ նպատակ 2:** << Սյունիքի մարզը կնվազեցնի ներքին անհամաշափությունը՝ 2025թ.-ին 2015թ. համեմատ 5%-ային կետով նվազեցնելով երկարաժամկետ գործազրկության մակարդակը՝ ուշադրություն դարձնելով կանացի գործազրկությանը, և 5%-ային կետով նվազեցնելով աղքատության մակարդակը՝ ուշադրություն դարձնելով հատուկ զարգացման կարիք ունեցող տարածքներին:

111. **Հիմնավորում:** Չնայած նրան, որ << Սյունիքի մարզում գործազրկության մակարդակը (15.7%), ավելի ցածր է, քան << ցուցանիշը (18.5%), սակայն ըստ մարզի տարածաշրջանների ցուցանիշները բավականին տարբեր են: << մարզերից ամենաբարձր մեկ շնչի հաշվով ՀՆԱ ունեցող << Սյունիքի մարզում բավականին բարձր է նաև աղքատության մակարդակը (24.5%), ինչը ևս ներքին հավասարաչափ զարգացմանն ուղղված ջանքերի հիմնավորում է: Այս նպատակը համահունչ է << 2016-2025թ. տարածքային զարգացման ռազմավարության 2-րդ նպատակի հետ:

